ՍԻՕՆ

ԱՄՍԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ, ԳՐԱԳԻՏԱԿԱՆ
ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՀԻՆԳԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ
ՇՐՋԱՆ ՄԻԱՄՆԵԱՅ



ՅԵՐՈՒՍԱՂԷՄ
Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ
1870

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Ամեն. Տ. Տ. ՄԿՐՏԻՉ Սրբազան Պատրիարք։
Գեր. Կարապետ Արքեպիսկոպոս։
Գեր. Արիստակէս Եպիսկոպոս։
» Յովհաննէս Եպիսկոպոս Սեթեան։
» Խորէն Եպիսկոպոս Նար—պէյեան։
Արժ. Խորէն վար. փոխ. Երուսաղէմեան։
» Գաբրիէլ վարդապետ Թաթարեան։
» Յովհաննէս վարդապետ Ղալաթիոյ։
Տ. Գրիգոր քահանայ Պէշիկթաշու։
Տ. Սուքիաս քահ. Մայր եկեղեցւոյ աւագ լուսարար
Ալըճեան մահտեսի Յովհաննէս աղա։
Աղամալեան Մկրտիչ և Կարապետ աղայք։
Աշնեան Պօղոս էֆէնտի։
Ապրօ Սահակ էֆէնտի։
Առաքելեանց Մարգար և Մարտիրոս աղայք։
Արայճեան մահտեսի Սարգիս աղա։
Արթինօֆ Անտոն աղա։
Արզումանեան Ստեփան պէյ։
Բաղդադեան Յովսէփ աղա։
Բարսեղեան Ստեփան աղա։
Գաբրիէլեան Մկրտիչ աղա։
Գալֆայճեան Ճանիկ աղա։
Գալուստեան Ղազարոս աղա։
Գայսերլեան Յարութիւն աղա։
Գասպարեան մահտեսի Գաբրիէլ աղա։
Գարակէօզեան Յովհաննէս աղա։
Գարակէօզեան Միքայէլ աղա։
Գաֆամաճեան Գէորգ աղա. (2 օրի.)։
Գաֆամաճեան Յարութիւն աղա։
Գաֆամաճեան Նազարէթ աղա։
Գաֆամաճեան Համբարձում աղա։
Գաւաֆեան Յովսէփ աղա։
Գրիգորեան Սիմօնիկ աղա։
Եազմաճեան Աւետիս աղա։
Եղիազեան Պօղոս աղա։
Երանեակ վարժուհի Սերովբէան։
Էօրտաճեան Կարապետ աղա. (2 օրի.)։
Զարդարեան Գէորգ աղա Կեսարացի։
Լամբրեան Գալուստ աղա։
Թագւորեան մահտեսի Յուսէփ աղա։
Թագւորեան Վրթանէս աղա Ժամկոչ։
Թաշճի օղլի Յարութիւնեան Առաքել աղա։
Թաշճի օղլի Վարդանեան Տաքէս աղա։
Իշխանեան Լեւոն աղա։
Իպրայէլեան Ստեփան աղա։
Իւթիւճեան Կարապետ աղա։
Իւզպաշեան Նազարէթ աղա։
Խաչատուրեան Գ. մահտեսի Գաբրիէլ աղա։
Խաչատուրեան Մկրտիչ աղա։
Խարբերդցի Յարութիւն աղա Սամուէլեան։
Կիւլպէնկեան Աբէլ աղա։
Կիւլպէնկեան մահտեսի Կիւլպէնկ աղա։
Կիւլպէնկեան Կիւլպէնկ աղա Կեսարացի։
Կիւլպէնկեան մահտեսի Սերոբէ աղա։
Կիւմիւշեան Համբարձում աղա Կեսարացի։
Կիւմիւշեան Յովհաննէս աղա։
Կիւրճեան Սահակ աղա։
Հաճեան Խաչէնտէր աղա։
Համամճեան Սարգիս էֆէնտի։
Հարենց Յօհան աղա։
Հարենց մահտեսի Աբրահամ աղա։
Հիւնքեար իսքէլեսեան Սողոմոն էֆէնտի։
Ղազարոսեան մահտեսի Խաչիկ աղա։
Ղազարոսեան Քրիստոսատուր աղա։
Ղազարոսեան Սահակ աղա։
Մուղալեան մահտեսի Սարգիս աղա։
Մաղմանեան մահտեսի Սարգիս խալֆա։
Մանուկեան Մանուկ աղա։
Մանուկեան Յովհաննէս աղա Կեսարացի։
Մանուկեան Սենեքերիմ աղա։ »
Մխիթարեան Միաբանութիւն ՚ի Վենետիկ։
Մխիթարեան Միաբանութիւն ՚ի Վիեննա։
Միսաքեան Խաչատուր աղա։
Միսաքեան Վարդերես աղա։
Միքայէլեան Սամուէլ աղա։
Միւպաշէճեան Մանուկ աղա. (2 օրինակ)։
Մոսիկեան Յակոբ աղա։
Մովսէս աղա աղաւնեցի Աճէմեան Վանեցի։
Մուրատեան Գէորգ աղա։
Յակոբեան Պօղոս աղա։
Յովսէփեան Կարապետ աղա։
Նաթանեան մահտեսի Համբարձում աղա։
Ներսէսեան Գրիգոր աղա։
Նիկողոսեան Պետրոս աղա։
Նորատունկեան մահտեսի Գրիգոր աղա. (2 օրի.)։
Նորատունկեան Յակոբ էֆէնտի. (2 օրի.)։
Նորատունկեան Սիմօնիկ աղա. (2 օրի.)։
Շահսուարեանց Ընկերութիւն Սեբաստիոյ։
Շահնազարեան Աւետիս աղա։
Ոսկերիչ Սարգիս աղա։
Չամըքթէնեան Գրիգոր աղա։
Չայեան Համազասպ աղա Բինկեանցի։
Չայեան Մկրտիչ աղա Բինկեանցի։
Չրաճեան Սարգիս աղա։
Չրաքեան Մելքոն աղա Արապկերցի։
Չօլաքեան Մանուկ աղա։
Չօպանեան Ղազարոս աղա։
Պալեան Սարգիս պէյ։
Պալեան Անտոնիկ պէյ։
Պալեան Յակոբ պէյ։
Պախալեան մահտեսի Խաչատուր աղա։
Պարտիզպանեան Աւետիս աղա։
Պէյլէրեան Խոսրով պէյ։
Պէրպէրեան Սարգիս աղա։
Պէշիրեան Միքայէլ աղա։
Պէօշեանց Գէորգ աղա։
Պօշնակեան Սարգիս աղա։
Պօյաճեան Սիմօն աղա։
Սագայեան Ալէքսան աղա. (2 օրինակ)։
Սանուց Ընկերութիւն Եւդոկիոյ։
Սարրաֆ Յակոբ աղա։
Սերովբեան Տօքթօր էֆէնտի։
Սերովբեան Յարութիւն աղա։
Սեֆէրեան Նշան էֆէնտի։
Սմբատեան Յարութիւն աղա։
Սուլուխանլեան Նիկողոս աղա։
Սուրէնեան Յովհաննէս էֆէնտի։
Սամուէլեան Կարապետ և Բարսեղ աղայք։
Ստեփանեան մահտեսի Մկրտիչ աղա։
Վարդանեան Աբրահամ աղա։
Վարժապետեան Գրիգոր աղա։
Տամաթեան Յակոբ աղա։
Տամպաճեան Աբրահամ աղա։
Տատեան Յ. Առաքել էֆէնտի։
Տատեան Պ. Առաքել էֆէնտի։
Տատեան Պ. Մկրտիչ պէյ։
Տատեան Յ. Ներսէս էֆէնտի։
Տատեան Պ. Նունէ օրիորդ։
Տատեան Պ. Սիմօն պէյ։
Տէրոյենց պատուելի Յովհաննէս աղա։
Տօղրամաճի օղլի մահտեսի Գաբրիէլ աղա Պէմպէճեան։
Տօնէլեան Յակոբ էֆէնտի։
Րէսիմճի օղլի մահտեսի Մկրտիչ աղա։
Փանոսեան Գէորգ աղա։
Փափազեան Գէորգ էֆէնտի. (2 օրի.)։
Փէշտըմալճեան մահտեսի Միքայէլ աղա



ՍԻՈՆ

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ
ԹԻՒ 4.

ԱՄՍԱԳԻՐ

ԱՊՐԻԼ 30.
1870

ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԳԻՏԱԿԱՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆՔ

Անցեալ ամսոյ Սիոնիւ խոստացուած Դպրոցիս Հանդիսին մէջ կարդացուած ճառերն ու բանաստեղծականը ահաւասիկ կը գտնէք Սիոնի մէջ իբրև աշակերտաց գրչի արդիւնքը, ոչ որպէս կատարեալ, այլ որպէս աշակերտի գրութիւն, որ շատ պէտքեր կունենայ դեռ եւս կատարեալ ըլլալու։

ՄԵԾԱԽՆԱՄ ՍՐԲԱԶԱՆ ՀԱՅՐ

ԵՒ ՎՍԵՄԱՇՈՒՔ ՀԱՆԴԻՍԱԿԱՆՔ

Ներկայ դարուս սովորութիւնը կը պախարակէ այն մարդիկը որք կ'երկբային կամ կ'ամչնան բարի գործ գործելու մէջ. և քաջալերութիւն կը քարոզէ այնոնց՝ ամենեւին չի վախնալ և անամչնած դիմօք յառաջել ՚ի բարեգործութիւնս։ Արդէն յայտնի է որ ընթերցասիրութիւնը կամ թէ նոյնին վրայ ճառելով քիչ մը յորդորական խօսքն ալ արժանաւոր գործոց կարգին կը վերաբերի. ուստի և այս երկուքէն մէկուն պարապողն ալ ՚ի հարկէն է որ առանց ամենեւին ակնածելու իրաւունք ունենայ մարդկան առջեւ յառաջելու։

Այն երախտագիտութեան քաջալերութիւնն ազդուութեամբ և ուժգին կը մղէ զմեզ իբրև փոքր մենամարտի մտնել և ելլել Հանդիսիս ատենանը, ու ըսել և քանի մը խօսք ու զղել մեծամեծ և բղձակաթ հանդիսատեսաց խմբեակին։ Թէ և անկարող մըտօք, սակայն բղձակաթ սրտով պիտի խօսիմք մարդկային կրթութիւնը դաստիարակութենէ յառաջ գալուն վրայ մեր դիմացն ունենալով Պլուտարքեայ խօսուածքը թէ "բնութիւնն զայր ամբիծ գլխովին և ամենակատար 'ի վեր բերել ոչ ունի"։

Յայտնի է ամենուն որ ամեն բանական էակ ունի բանական հոգի. հետևապէս միտք և կամք. ունի մըտածողութիւն և խոհականութիւն, բայց ոչ հաւասարապէս։ Քանզի բանականութիւնը, որ միմիայն մարդուս յատկութիւնն է, և անոր բնութիւնը կը յայտնէ, ոչ հաւասարապէս ներգործած է ամեն անհատի մէջ, այլ ոմանց շատ և ոմանց քիչ. ինչպէս արդէն կը տեսնեմք մեր տեսութիւններուն մէջ. որչափ զանազանութիւն կը տեսնեմք մարդոց, այնչափ ալ մըտածողութեանց տարբերութիւն, որոնց մէջ այնպէս հրաշալի կը գործէ բանականութիւնը որ, կարծես թէ արարած չեն։ Կան ալ մարդիկ որոնց գործերն այնչափ ցուրտ են որ կարծես անոնք ալ բանականութենէ չեն առաջնորդուիր։ Կը գտնուին շատ տեղեր արարածներ, որոնք ամենևին չգիտեն թէ ինչ է մարդկութիւնը և ինչ արժէք ունի և թէ արդեօք տարբերութիւն մը կեցած կրնա՞յ ըլլալ մարդոց մէջ։ Ամենևին չեն գիտեր որ արդեօք մարդկութեան յատկութիւնը պայծառացնելու դարման մը կա՞յ և կրնա՞յ ըլլալ։ Չեն գիտեր թէ ինչ է կրթութիւնը կամ դաստիարակութիւնը և ինչ հետևութի̃ կրնայ ունենալ. շատ չերկարցնենք խօսքերնիս, վերջապէս չը գիտեն թէ ինչ է բանականութիւնը, և ինչ կը պահանջէ իր ենթակայներէն։ Ուրեմն այն մարդը որ իր պաշտօնը կամ լաւ եւս է ըսել իր յատկութե̃ վերաբերեալ գործը չը գիտեր և չը ճանչնար, այն մարդը որ իր արժէքը և պատիւը չը գիտեր և չը ճանչնար, ինչպէս կարելի է ճանչնայ միւս արարածներն ալ, և ինչպէս կարելի է բանականութեան պաշտօնն անթերի վարած ըլլայ, որ է Աստուծոյ նմանիլ որ անկարելի է մարդուն համար, եթէ չը կարողանայ ճանաչել բնութե̃ բոլոր արարածները։ Բանականութի̃ը մտածողութիւն և խոհականութիւն կը պահանջէ իր ենթակայներէն, և ինչպէս կարելի է գերագոյն սեպուիլ միւս արարածներէն, մինչ անոնցմէ տարբերութի̃ մը չ'ունի. ինչպէս կարելի է անոնցմէ տարբերիլ. քանի որ բանականութիւնը չը ներգործեր բացարձակապէս։ Եթէ կերպարանօք պիտի ըսեմք, մարդկութիւնը արտաքին երեւոյթի վրայ չ'է. իսկ եթէ մտածողութեամբ կամ խոհականութ̃բ ըսեմք, արդէն ինքը անոնցմէ այնչափ հեռացեր է որ ամենևին յոյս չը կայ վերստին մօտենալուն. և ահա այսպիսեաց համար է մարդարէութեանց գանգատումը. որ առանց երբէք ակնածելու կը գոչէ. "մարդ 'ի պատուի էր և ոչ իմացաւ, հաւասարեցաւ անբանից և նմանեցաւ նոցա"։ Ո՜հ կ'ամաչեմք ըսելու թէ ճշմարիտ է. սակայն ուշադրութեամբ ալ յարմար կը գտնենք մեր ընթացքին, կամ աշխարհիս մեծագոյն մասին ընթացից, 'ի բաց առեալ անոնք, որ գիտեն բանութեան զօրութիւնը, և անով ալ թէ մարդ ինչ պարտք, և ինչ վայելքներու իրաւունք ունի։ Եթէ այս ամենը պատկերացնելով մեր մըտքին մէջ ուշի ուշով նկատելու ըլլանք պիտի տեսնեմք, որ այս ամենը ուրիշ բաներու պատճառները չեն, եթէ ոչ ազատութեան եւ անկրթութեան։ Քանզի դաստիարակութեան լուսաւորիչ ճառագայթներն են, որ իրենց ծաւալուած տեղերը անմիջական նշոյլներով կը փայլեցնեն ներկայի որդիները։ Որովհետեւ դաստիարակութիւնը որ բոլոր բարութեանց արմատն է, կը ճոխացնէ մարդուս իմացականութիւնը. դաստիարակութիւնն է, որ կը ճանչցնէ մարդուս իւր պարտաւորութիւնները. պատիւը պայծառացընելով. դաստիարակութեամբ է, որ մարդս կը գործէ ըստ իւր բանականութեան։ Ըստ որում՝ որչափ որ մարդըս բանական ստեղծուած է, անօգնական չէ կարող իւր գծին մէջ յառաջանալ. զոր օրինակ, նորածին մանուկ մը թողունք անասնոց մէջ, անմարդաբնակ վայրերու մէջ, պիտի տեսնեմք որ մանուկն սնելով պիտի դառնայ նոյն անասնոց բնութեանը, նոցա ձայնը պիտի հանէ. վասն զի խօսող մը չը կար իւր առջեւը որ անորմէ խօսիլ սորվէր. անասնոց շարժումները տեսաւ, և նոյնն ստացաւ. այսպէս ալ եթէ՝ ունենայ իւր առջեւն ըստ բանականութեան գործող կատարեալ օրինակ մը, նոյնը պիտի սորվի անտարակոյս։ Արգոյ հանդիսականք, Ձեզ հարցնեմ, ի՞նչ է պատճառը որ այս դարը լուսաւորութեան դար կոչուի, եթէ ոչ մարդկութիւնը որ մինչեւ ցարդ իւր դաստիարակութեան թերի ըլլալովն ըստ մարդկութեան կատարելութիւններ գործելու կը տկարանար. այն դարերու մէջ դաստիարակութեան յարգն աւելի ճանաչելով հետզհետէ կ'ուզէ իւր լոյսը պայծառացունել։ Եւ հին ժամանակաց բաղդատութեամբ հիմա աւելի շատ կ'երեւին կրթեալներ։ Ահա ասոր համար է որ լուսաւորեալ կը կոչուին վերջին դարերս։

Անցեալն ահաւասիկ ուրիշ օգուտ չունի եթէ ոչ ապագային ուղիղ շարժելու գլխաւոր մ'զգալ. մեզ համար մտածելու չենք ամենեւին որ ինչո՞ւ մեր ծնողները կատարեալ դաստիարակութեան չեն յանձնած մեր կենաց սկիզբները, մեր թերին ճանաչելով ապագային կատարելութիւնը պատրաստել, աշխարհի առջեւ հաւասար պարծելի է, առաքինիի մը շարունակ գործելու պարծանացը։ Այսպէս ահա պիտի վայելէ աշխարհ (ոչ երկրագունդն, այլ մարդիկներս) աստիճանաբար բանաւորութեան քաղցրաճաշակ պտուղներէն, մէկը միւսին աւանդելով շարունակ։

Որդւոց յառաջադիմութիւնը՝ ի փառս Հարց է, և երբ այս ինչ դար մը կը պայծառանայ դաստիարակութեան և գիտութեան նշոյլիւք, կը հետեւցնեմք որ այն լուսոյն ծագումը նախորդ դարուն սկսած է։

Ամէն եղբայրակցութիւն յայտնի դըրուելու հարկ չկայ։ Նախադասութիւններն ալ կը գուշակեն լսողներուն. ըստ որում՝ հետեւեցուցչին հետեւութիւնն անմիջական է։ Որով և կը պարտաւորիմք միշտ մեր ստացածը մեր Սրբազան Հօրդ. գերապատիւ Հարց և ընդհանուր Ազգին ճըշմարիտ բանասիրաց. զոր խոստովանիլ մեր քաղցր պարտականութիւնը համարուած է մեզ միշտ։

Գէորգ Տ. Յարութիւնեան Իսմայէլցի.
Աշ. Քա. Վարժարանի.

Յամի Տեառն.
1870. Ապրիլ 2.

ԱՄԵՆԱՊԱՏԻՒ ՍՐԲԱԶԱՆ ՀԱՅՐ ԵՒ ՅԱՐԳՈՅ ՀԱՆԴԻՍԱԿԱՆՔ

Չկայ երբեք երկրագնտիս վրայ ազգ մը՝ կամ որ և իցէ ժողովուրդ մը, որ ամէն կողմանէ թէ բնապէս և թէ բարոյապէս կատարելութիւն ստացած ըլլայ, սակայն ներկայ դարուս մէջ ամէն բերան, ամէն շրթունք և ամէն մատ կը ցուցունեն ազգեր, զորս ամենալուսաւորեալ ազգ համարած՝ և իրենց յոյսն անոնց վրայ դրած և զայն իրենց առաջնորդ ընտրած՝ անոր շաւղին հետեւելու կը ջանան։ Արդեօք ինչ է ասոր շարժառիթը, և ինչո՞ւ արդեօք մեր ազգն ալ այսպէս օրինակ մը չէ կարող տալ, անտարակոյս ունի իւր պատճառը, և որով հասարակաց կատարելութիւններն անօգուտ, մանաւանդ որոց հանճարներն եթէ ծածուկ և եթէ երբեք ճանչցուին ալ, ըստ չափու արժանաւորութիւն չունեցող, իւր օգտակար առաջարկութիւններն անգործ, վերջապէս իւր կենդանութեան շունչ տուող ամէն պարագաներն երեսի վրայ մնացած են։ Արդեօք կա՞յ աշխարհիս մէջ ազգ մը՝ որ ունենայ այնչափ բնական կատարելութիւններ մէկտեղ, որչափ որ Հայ ազգին փոքրիկ խմբերակին մէջ գտնուող անհատներն ունին։ Հայն Եւրոպայի ո՞ր ազգէն յետ կը մնայ։ Եւրոպական ազգերու ունեցած կատարելութիւններն՝ ըստ ամենայնի կրնայ ունենալ և Հայն ալ, վասն զի այն կատարելութեանց բուն սկզբնաւորիչ եղող ըզգայուն ոգին ունին ասոնք ալ։ Թող որ ունին նաեւ բարեխառն կազմուածք, բարեբեր բնութիւն, և ասոնցմէ զատ իրենց զգայուն և շարժուն հոգւոյն արգասեօք՝ ամէն բնական նըրբութեանց մէջ յառաջադիմելու կարողութիւնն և ամէն տեսակ ուսմանց և արհեստից համար զարմանալի յարմարութիւն։ Թող չըսուի որ Հայ մը մը Հայուն համար գովեստ կ՚ուտայ, ոչ, Հայուն այս յատկութիւններն օտար ազգաց բերանն ալ գովաբանութեամբ հռչակուած է շատ տեղեր։ Ապա ուրեմն ով չպիտի ըսէ թէ Հայուն պակասութիւնը միայն ժողովրդոց թերի կրթութիւնն է։ Բայց արդեօք Հայը ընդունեց այս մակդիրը, և պիտի թողու՞ որ ուրիշները իրաւունք ունենան այսուհետեւ ալ այսպէս անուանել զինքը։ Ամենեւին ոչ, մեծ յուսով պիտի խօսիմ, որ Հայն այսուհետեւ այս թերութիւնն ալ պիտի վերցունէ իւր վրայէն. որովհետեւ երբեմն ցոյց կուտայ իւր ընթացքին մէջ նա՝ այնպիսի շարժումներ, որոնք ազգի մը խոհական երջանկութիւնը կը նկատեն, և այնպիսի երջանկութիւն որ յառաջադիմութեան ցոյց է, ինչպէս որ կը կատարէ ինքը ոգիները շարժող ազգային օգտակար հանդէսներ, որոնք խիստ օգտակար են և պիտի ըլլան՝ իւր ապագայ երջանկութեանն համար. եւ որոց կարգէն է նաեւ այսօրուան հանդէսս, որուն առթիւ այսօր խուռն բազմութիւնդ, Արգոյ Հանդիսականք, ժողովուած նպատակ ունիք Ձեզ՝ ազգիս քանի մը մանկանց՝ անցեալ օրերու մէջ ցոյց տուած, իւր վաստակոց տկար և քիչ յառաջադիմութիւնը վարձատրելու։ Ահա աշխատող մանուկին համար, բաւական գալ պիտի ըսեմ՝ Հարց հայեցուածք մը, որ թէեւ ինչ կը ժպտի՞ ապագայ բարիքներ սպասող մտաց հետեւութեամբ։

Ինչ թէ Հայը ազգային օգտակար հանդէսներ կը կատարէ. արդեօք ինչ օգուտ պիտի ունենայ, որոնենք անգամ մը թէ ազգի մը լուսաւորութեան համար այս տեսակ հանդէսներ կրնա՞ն երբէք արտադրել որ և է մէկ նպաստ ։

Ըսուած և գիտուած բան մ'է արդէն՝ որ մանկտին ազգաց սերունդըն է . և մանկութիւնն է ապագային կենաց որպիսութեան վճիռը տուող ։ Սակայն գիտենք առ հասարակ , որ մանկութիւնն ըստ ինքեան 'ի բարին շարժելու յուսադրիչ կէտ մը չունի , և մանկութիւնն եթէ ըստ ինքեան պիտի ծերանայ , նորա հետևութիւնը կամ ապագայն վճռելի չէ . բայց միայն մանկանց տրուած կրթութիւններն են , որ գրեթէ բացարձակապէս կը նախատեսեն անոնց ապագայն ։ Եւ որովհետև դպրոցն ուրիշ բան չէ , եթէ ոչ հասարակաց մանկութեան կրթարան , ուստի և կը մնայ մեզ տեսնել թէ՝ արդեօք այս տեսակ հանդէս մը կամ քննութիւն մը ինչ օգուտ կարող է ունենալ դպրոցներու յառաջադիմութեան համար , ուրիշ տեսակ օգուտները զանց ընելով միայն կը նկատենք որ գործ մը քաջալերութեամբ կրկին կը յառաջանայ. այս քաջալերութիւնը դպրոցին համար ուրիշ բան մը չէ , եթէ ոչ քննութիւն և անոր հետևորդ այս աւուր հանդէսս , և անոնց նմանները , որ ուրիշ բան ըսել չէ ; եթէ ոչ քննութբ ցուցուած այն քիչ արդեանց հաւանութիւն մը , որոյ առթիւ դրուատմամբ որ բորբոքիչ պիտի ըլլան անշուշտ աշակերտաց ջանից և աշխատութեանց. Թողունք օտար ազգերը մանաւանդ Հայուն համար մեծ օգուտ ունի հանդէսը , որովհետև ցրուած է ժողովուրդը աստ և անդ . շատերը հեռաւոր երկիրներ գաղթուած . զուրկ 'ի միութենէ , և անոր արգասիքներէն , ուստի հաստատութեան մէջ կատարուած այս տեսակ հանդէսները , անշուշտ այն հեռաւոր տեղեր գտնուած Հայուն սիրտը պիտի գըրաւէ և պիտի շարժէ՝ որ ինքն ալ քանի որ Հայ վսեմ անունը կը կրէ , ձեռնտու ըլլի և մասնակցի այն ուրախութեան՝ որ ընդհանուր ազգին համար է . քանզի դպրոցն է ըստ մեծի մասին որ զինքը պիտի կացուցանէ ապագային մէջ ։ Եւ արդէն երբ զգայուն սիրտ մը այս տեսակ հանդէսներուն ներկայանայ՝ անշուշտ պիտի ըզգածի և պիտի սկսի իւր սրտին մէջ ծագիլ եռանդ մը և հետևաբար պիտի սկսի օգնել դպրոցաց ։

Արդ՝ հասկցանք որ , հանդէսն՝ մեծ օգուտներ կ'արտադրէ եղեր դպրոցի մը համար . ուրեմն ինչ ընելու եմք ասոր ծաւալման համար. թէ ոչ շարժիլ , որովհետև շարժումը կենդանութիւն կ'ենթադրէ , կենդանութիւնն ալ միշտ գովելի է ։ Ինչպէս ամէն դարերուն՝ նոյնպէս և ներկայ դարուս մէջ մարդկութեան վնասակար և ամենէն եպերելի յատկութիւնըն է անշարժութիւնը . անշարժութիւնը կըսեմ , որոյ հետևանքն է կատարելապէս փտտիլ ու նեխիլ իսկ ։ Եթէ չը շարժիմք , անշուշտ պիտի վնասուիմք . և որով պիտի կործանեմք Սահակեան և Մեսրոպեան սուրբ հայրապետաց Հայոց ազգի լուսաւորութեան և վերակենդանութեան համար հիմնած՝ սուրբ տաճարը . Միթէ նախատինք չէ՞ Հայուն այն ատեն՝ երբ Հայ գրականութեան այն բարձըր դիւցազանց կառուցած շէնքը կործանի , միթէ օտարը ինչե՞ր չը պիտի զրուցէ իրեն . մենք կը պարծիմք որ , մենք հայու որդի եմք . Սահակ և Մեսրոպայ Հայրեր ունիմք . սակայն երբ իւրեանց ընթացքը չ'բըռնեմք , և եթէ անոնց շաւղին չը հետեւիմք, միթէ օտարներն իրաւամբ պիտի չըսեն մեզ այն յանդիմանական ճշմարտութիւնը թէ՝ «Եթէ որդիք նորա էիք, զգործս նորա անշուշտ գործէիք» Ուրեմն աւելի օգտակար շարժումներ ցոյց տալով, ջանալու ենք անոնց շինած շէնքը աւելի զարդարել և բազմացունել, և անոր համար ջանալու ենք ծաւալել այն վեհ սկզբունքները, որոնք կը ծառայեն դպրոցի մը վերականգնութեան համար. թէ հալածել պէտք է տգիտութիւնը և մտքերը լուսաւորել և մշակել, որովհետեւ անկարելի է, անմշակ սրտի մը մէջ լոյս արծարծել, ըստ որում՝ անմշակ սիրտ մը կը նմանի այն անապատին, ուր չորցած խոտ միակ կ'երեւի վերընձիւղեալ, ուստի պարտաւոր ենք զանոնք յորդորել և խրախուսել որ ամէն ջանք ՚ի գործ դնեն ազգի լուսաւորութեան համար, և այս տեսակ հանդէսները եւս անոնց գլխաւորներէն մին ըլլալով, աւելի ջանալու ենք զայն ծաւալել, որովհետեւ որչափ որ հանդէսն երեւի, նոյնչափ շատացած պիտի ըլլամք դպրոցի սէրը, որն որ լոկ ինքն է ազգի մը ոգին. նա է անոր անիւը, նա է իւր գաւազանը. վերջապէս նա է իւր լուսատու ջահը, որն որ աշխարհ ամենայն անոր շաւղին հետեւելու կ'աշխատին։ Եւ եթէ Հայը լուսաւորեալ զաւակ մ'ալ ունենայ, որովհետեւ նոցա ալ դաստիարակութեան սկզբնապատճառ՝ միմիայն դպրոցն է, վասն զի նոքա հոն պիտի կարենան իրենց հարկ եղած մտաւորական զարգացումը գտնել, հոն պիտի տեսնեն նոքա կատարեալ մարդկութեան մը պէտք եղած բոլոր գործքերը, հոն պիտի փոքր ինչ աշխատելով կարողանան ապագային համար օրինաւոր հանգըստութիւն մը պատրաստել, հոն պիտի ճանչնան նոքա իւրեանց ազգը և և կրօնքը և այն տեղէն պիտի առնան հանճար և կրթութիւն իւրեանց բանականութիւնը իբր լոյս փայլեցընելու համար. որովհետեւ հանճարն ու կրթութիւնն է որ զմարդ անբան կենդանիներէն կ'որոշէ. և նոքա այն տեղէն պիտի գտնան իրենց մարմնաւոր պիտոյքը հոգալու՝ ամէն կերպ գործքերը. և այն տեղէն պիտի ծագի Աստուածպաշտութեան գեղեցիկ պտուղը, այն տեղէն պիտի սորվին անոնք՝ իրենց առ ծնողս ունեցած պարտուց ճանաչումը, այս, դպրոցը պիտի ցուցունէ անոնց կանխապէս ընկերսիրութեան և միաբանութեան արդիւնքը, հոն պիտի սորվին անոնք թէ ինչ բան է պարտք և իրաւունք. վերջապէս դպրոցով պիտի յառաջանան այն ամէն բարեգործութիւնները, որոնք մարդուս իւր կենցաղոյն մէջ երջանիկ ապրելու նիւթերը պիտի ըլլան։ Ուրեմն ամէն անհատ առանց տարակուսելու թող ճանչնայ թէ պարտականութիւն ունի, իւր ազգի սիրոյն, դպրոցաց յառաջադիմութեանը փոյթ տանելու. ասոր ալ շատ տեսակը կայ. որ և է աստիճանի մարդ կարող է այն մի մի տեսակով նպաստել դպրոցաց։

Արդ՝ քանի որ գիտցանք թէ հանդէսը խիստ պիտանի գործք մը է՝ յառաջդիմութեան համար, և հետեւապէս քանի որ խիստ մեծ օգուտներ ունի դպրոցի մը համար, և որովհետեւ դպրոցն ալ ամէն բարեաց աղբիւրն է, և որոյ յառաջդիմութիւնն ազգէն կախումն ունի, ուրեմն ցոյց տանք կենդանի շարժումներ և ջանանք ջնջել այն վատ անունը՝ որ կուտան մեզ շատերը «Հայերը թերակիրթ են» ըսելով։

Չմոռնանք ըսելու որ բարեգործին յառաջ բերած օգուտն երբէք չը մոռցուիր. գիւղացին քիչ և շատ, ոչ թէ յառաջադիմութիւնը՝ այլ անոր աշխատութիւնը, դարձեալ կը պարտինք անոր հոգաբարձու Սրբազանին և Գերապատիւ միաբանական սուրբ հարց, որոնց սրտի փափագանաց հետեւութիւնն է անշուշտ որ ազգային մանկոյն մէկ մասն կը դաստիարակուին գիւղին մէջ: Դարուց 'ի դարըս յաւէժ պիտի հնչուին բարերարաց այսպիսի անմոռանալի ձեռնարկութիւններն զոր յառաջունին բերնով ըսել ամէն որ կարող չէ, հոգւով և սրտով իմանալ շատերը կարող են:

Յ. Յ. Թուլայէ.
Աշ. Ժառանգ. Վարժարանի:
1870 Ապրիլ 2.
Երուսաղէմ:

Բանախօսութիւն բանասիրական. ազգասիրութիւն. ազգատեցութիւն. աւետաբեր. գուժարկու. յուսահատ անխռով:

Ազգասէր. Չմնաց ազգային ոգին, չմնաց և ճանաչող, ազգասիրութիւն ըսի՛ նախատուեցայ, գրի իմ անձս և ուզեցի փրկանօքս ապրեցնել. սակայն ո՜վ գիտէ աշխատողին միտքը, վաստակողին քրտինքը, մշակին վարձը, ո՜վ գիտէ զօրավարին պսակը, յաղթութեան մրցանակը, քաջալերութեան հետեւութիւնը: Ամենայն ինչ դարձան ոչինչ: Կը յորդորեմ ընկերս, կը մերժէ խնդիրս. վասն զի իւր անցեալը կը յիշէ. կը յորդորեմ բարեկամս, իւր կորուստը կ'ափսոսայ, կը կանչեմ դրացիս, գալիքը կը խորհի, անցորդին կանչեցի և ցաւօք սրտի լսեցի, որ և է իշխանութիւն թագ է իմ գլխուն: Քաշուեցայ մէկ կողմ և չդադրեցայ, կարծես եռանդըս կը բորբոքէ ջիղերս, կամ թէ արիւնս կը ճմլէ սիրտս: Կամ ձիւնի կարկուտ մը ինկնայ իմ վրաս զովանամ քիչ մը, կամ աղբիւրակ մը հոսէ մազերուս որ պաղիմ քիչ մը. ապա թէ ոչ համայն աշխարհը փայտ է առջեւս, թող լուռ կենամ, այրեմ բոլորը: Խռովներէ կանչեցի չունէր արձագանգ ձայնս գազաններէ կանչեցի, առանց մէկը լսելու ցնդեցաւ յօդս:

Ազգատեաց. Ինչ ձայնդ կը թողուս դարձեալ, ազգասէր, ազգասէր, գործըդ ո՞վ է տեսեր. խօսքով ի՞նչ կըլլայ. օտարազգիներէն ալ չէք անհածեր, կարգ և կանոն գիտցողներն հիմայ ի՞նչ կ'ըսեն: Չգինք գործերնիս կանգնինք մէջ տեղը. անցեալէն 'ի վեր կեցած ես այս տեղ և չես գիտեր դեռ թէ ի՞նչ է շահդ: Այժմ երկու մարմնոց շփումը կայծակ կը բերէ, սակայն ջուրը ջուրին զարկ, կամ թէ փայտ մը առ ջուր ծեծէ: Արդէն չէ՞ք նկատած որ շոգենաւաց մեքենայներ հազարաւոր ձիերու զօրութեամբ 60 տարիէ 'ի վեր անդադար կը ծեծեն ջուրը. ետեւն ինչ տեսար. չէ թէ միայն հուր չիկայ, այլ և ոչ իսկ կայծ, և այսուհետեւ ալ մի յուսար:

Գուժաբեր: Ո՜ւր ջան անօգուտ վաստակ. պատգամախօսի մը չափ գիտեմ որ Հայոց ազգը երբէք չէ խնդացեր, վաղն ալ պիտի չ'խնդայ, թէ և կանխատես ըլլալու համար շատերը պիտի ցաւին որ հանուր ազգի մը կը գուժեմ, սակայն ինչ ընեմ, անունս գուժաբեր է: Սիրտս է որ ներքին տեսութենէս խորին մտածութիւններէս կը թելադրէ զայս ըսել, և ոչ միայն բերանս է կ'արտասանէ: Թող հասկցողները միայն հանգչին։ Աշխարհիս իմաստուն և հմուտ բանաստեղծութիւննըն այսպէս բանաստեղծած է. և այսպէս կըսայ ուղիղ իմաստաւորած ըլլալ։ Շարժումն, և տարբերութիւն. սէր և միութիւն, կանգնումն անդրդուելի. գողութիւն կեղծաւորական, անկումն անկանգնելի. խօսք անիմաստ, պատիր հետեւանք։

Սեպտեմբեր։ Ո՛, Աստուծոյ վրայ բան կը խօսի. Աշխարհի ազատեաներն անօթի մնացած են։ Չգիտեր երբէք որ Երուսաղէմ Մելքիսեդեկի շէնք. քահանայի հիմնարկութիւն և օրհնութեան քաղաք է։ Հոն ի՞նչ գործ ունին գուժաբերի անուանակիրները։ Սիօնի որդիներ գրուած են Հայազգիները. պիտի ապրին անշուշտ Հայու որդիները. նոյն արթնութիւնն իրենց երջանկութիւնը Թշուառուէ պիտի չտանի երբէք, ապաւէնին, եւ պիտի ձեռք բերեն իրենց հանգիստը։ Ահաւասիկ կը խնդամք և պիտի խնդամք. և երբէք մը ժամանակ չեմք խնդացած։ Թող ապիծը քարձբանայ, աղուէսը կերակրուի։

Հոկտեմբեր։ Ես կ'ըսեմ հաց չունիմք, ան կ'ըսէ ջուր ունիմք. արեան հիւանդութիւն ունեցողին ջիղը կը ծակեն որ առողջանայ. երբ ծակը չգոցեն, յանուհետեւ կեանքը կը դիմանա՞յ։ Քանի՞ հոգի պիտի կարենամք համոզել երբ ըսեմք ջուրը դէպ ի վեր ակը կը վազէ, ըսենք թէ հաւատացողներ եղան, պիտի ըսեմք որ, ապիկները կամ չեն գիտեր ինչ է ջուրին վազելը. և կամ ջուրին որ կողմը կ'ըլլայ ակ, այսօր ալ վաղն ալ անոնց գուժաբեր է, չը խնդացիմք եւ պիտի չխնդամք։ Տգէտը կարատեամբ պիտի մեռնի, անմիտը զինքն երջանիկ պիտի կարծէ։ Սէրը թող տրտմի, և կէսը մխիթարուի. տրտմին գիտութեամբ, մխիթարութիւն չգիտութեամբ։

Նոյեմբեր։ Կենդանի է հոգիս և արթուն. ինչ որ կ'ըսես ինքնին չես գիտեր. եթէ համարձակէիր զքեզ սառյիկեան մը ձեւացնել պիտի ունենայիր, աշխարհի զմնաղան և գրեթէ ամէն կողմերու ուրախութիւնը։ Մի՛ թէ այսինչ մարդիկն ես հոգի և մարմին չե՞ն մեզի չափ։ Իսկ եթէ պիտի չխնդայ մարդը, առնք ինչո՞ւ կը խնդան. քանի որ առնք կը խնդան եւ դու ինչո՞ւ պիտի չխնդամք. մեզի ինչ կը պակսի. եթէ նոյա ինքնուէ Աստուծմէ է, ահաւասիկ մենք ալ նոյն Աստուծոյ արարածներն ենք. եթէ աշխարհէն է, ահաւասիկ մենք ալ աշխարհի մէկ մասին վրայ կը գտնուիմ, եթէ զօրութենէ է ահաւասիկ մենք ալ թագաւորութեան կը ծառայենք, եթէ ըսենք իմաստութենէ է, ահաւասիկ ունիմք ալ ձեռք բերելու վրայ եմք։ Հոգիս ազատ է, մարմինս փառաւոր. քանի որ ազատութիւն կայ, ազգերը կանգուն են։

Դեկտեմբեր։ Որովհետեւ բարեկամաց այս փոքրիկ տարեանը ծանօթացաւ մէկ մէկու խրատնչիւրն իւր յատուկ անունն յայտնելով. և մենք եւս կը փափաքիմք սոյն խմբակին եթէ ոչ անգամակի երկար վիճաբանութեամբ, գէթ քանի մը խօսքերով երկու կարծիք յայտնել, ուստի ներեցէք մեզ ալ ակամբ գնել քիչ մը. անունս յուսահատ է, գործերս մեռեալ. ձայնս անշունչ, կարծիքս անլուր։ Հեռացուցի, չը հասկցան. փառատրանեցի, չը կարողացայ համոզել, փափագեցի ձեռքս բերել ջանացի և չհասայ, ուստի և ամէն ոք կարծեմ գիտէ պիտի հասանի, թէ անոնք ուրիշ բան չէ և չը կրնար ըլլալ եթէ ոչ յուսահատ։ Հիմա պիտի խօսիմ ձեր մէջ, սակայն մէկ կամ միւս կողմի անհաւատութիւն պիտի չնեմ, թող ցաւ ալ չըլլայ. ազգասէր բարեկամ, դուք դեռ փորձառու չէք. դուք ալ գուժաբեր բարեկամ, շատ երկչոտ էք այնպէս որ ձեր պաշտօնին տարածէն ալ աստիճան մը կամ երկու աւելի, երբեք ալ եթէ ըսեմք կ'ըլլայ. Դուք իմ յուսահատութիւնը անցած էք. որչափ որ փայտը ջուրին չփելով կայծ յառաջ չգար, 'ի վերայ այսր ամենայնի աշխարհս ալ ամեն ատեն ամեն պարագայի մէջ փայտը ջուրին չը մերձենար, վասն զի ջուրէն զատ ուրիշ շատ տեսակ մարմիններ ալ կան, որոց ալ շփումը միշտ արդիւնաւոր հետեւութիւն ունի; սակայն ինչպէս որ կը կարծեմ, դուք նաւավարութին կամ նաւորդութիւն շատ ըրած ըլլալու էք, և ներհակաբար մեքենայից ջուրի վըրայ ըրած հարուածէն կայծ կ'ըսպասէք. մինչդեռ այն հարուածն հնարաւոր է, որ նաւն յառաջ երթայ. փուշէն խաղող չեն սպասեր. խաղողըն ալ թուզ չպտղաբերեր. ամենայն շարժումն ունի իւր հետեւութիւն. Ահաւասիկ հանդէսներու մէջ ներկայացնելիք նաւավար մը կամ նաւորդ մը, որ չ'գիտեր թէ ինչ արդեօք կը նկատէ նաւին շարժումը.

Ազգասէր. Ինչի ուղիղ կը խօսիք և ըստ բանաւէր մտաց, քան թէ սըխալ.

Գուժաբեր. Այսպ կը խօսիք ըստ ագիտաց եւս.

Անխոհ. Եթէ ներելի է մեզ անունս չ'յայտնած և խմբակից բարեկամներէն մին չ'գանուած ալ. Պիտի խնդրեմ որ, դուք ազգասէր բարեկամ, յայտնէք մեզ ինչպէս ուղիղ կը խօսի յուսահատը. Յուսահատս ձեզմէ ալ (Ի Գուժաբերը նայելով) կը խնդրեմք որ հասկընէք թէ ո՞րն է այս բարեկամին (դէպ 'ի յուսահատն երկնցնելով ձեռքը) խօսած սխալները, որ յայտնի է և ագիտաց.

Ազգատեաց. Ի՞նչ կը տագնապիք բարեկամներ. գործերը բոլոր թիւր են և հակառակէն նկատելու է. փորձառութիւննիս մեզ այսպէս ըսել կու տայ, բայց չեմ գիտեր թէ ուրիշները դեռ փորձառու չըլլալո՞վ զմեզ թիւր կը կոչեն, եթէ նոքա ալ ունին փորձառութիւն մը, և մերն անոնց փորձառութեան քովն աւելի թիւր է. Բանի որ աշխարհի մէջ նենգութիւն կայ. որո՞ւ պիտի վստահիմ թէ աննենգ է և ուղղընթաց, գնոցի Վասակին բարեկամացդ. միասին խորհեցանք որ Հայոց ազգը որ ժամանակ ալ որ ըլլայ կարող է իւր կրօնքն ազատել, մեզ կը մնար միայն ազգին թագը պաշտպանել. սակայն որո՞ւ կրնայինք երբէք մեր միտքը յայտնել, անմիջապէս անքթիթ աչօք կը մեռցնէին զմեզ. Խնդիրն հոս չէ, տես թէ ինչե՞ր կան ասոնց հետեւութիւններ. Նա միայն վաստակ մը կը խորհէր այս գործին, ես կատարեալ ազգատեաց մը հարիւր աստիճանի զօրութեամբ կը ջանայի գլուխ հանել նպատակը. և յաջողեցանք իսկ, ձեռք բերինք մեր կողմէն ազգին թագը, արդէն միւսներն արդեամբ գնեցին կրօնքը. ա հաւատի ազգս ալ առանց կորուստ մը տալու պիտի մնայր կանգուն յառաջագոյն տուած կորուստն ալ մի և նոյն ժամանակի մէջ վրայ շահելով.

Ազգասէր. Պիտի ըսես ամենեւին, ազգատեաց մը այդպիսի խորհուրդ մը չ'կրնար խորհիլ կը ներսի դին, դու ազգատեաց Վասակին կրթեալ մատնեցիք ազգը պարսկին ձեռքը և կործանելու աշխատեցայք, սակայն երկնաւորն Աստուծոյ անտեսանելի տըքաջութիւնը ձեզի դէմ հանեց ազգասիրաց խումբ մը, որ փայտերու հարուածներով յետս դարձուց ձեր ընդունած Աստուծոյն բագնոց ըսպասաւորող քուրմերը. արեամբ ներկեցին զինուորաց աչքերը, և էապէս համոզեցին Պարսիկը որ կամ պէտք է բոլոր Հայերը ջնջուին և ապա բարձուի անոնց ազգութիւնն ու կրօնքն. կամ եթէ ոչ պիտի տեւէ Հայուն թէ կրօնքը և թէ ազգութիւնը, եթէ մէկ անհատ ալ միայն մնայ մէջ տեղը: Արդէն մեր յառաջադէմներէն ոմանք այն ժամանակ շատ անմիտ էին, հերիք էր որ Պարսից դուռն իրենց նշան կամ տիտղոս մը շնորհէր, շուտ մը լուծին տակ գլուխ կը դնէին: Եւ նոյն տիտղոսով կամ նշանով իբրեւ Պարսիկ կը շարժէին և զՀայն անդադար կը ճնշէին:

Յուսահատ: Ազգատեաց բարեկամ, դուք այսօր ԺԹ. դարու ծնունդ, Դ. կամ Ե. դարու գործերէն ինչ լուր կրնայք հաղորդել իբրեւ ներկայ, և գործողացն ալ գործակից:

Ազգասէր: Մտիկ ըրէ (յուսահատին) որ խօսքն աւարտի, չես հասկնար ինչ կ'ըսուի. չէ՞ որ ժամանակին նկատմամբ դարերով անջատեալ, բայց խորհրդով այսօր բոլոր նոյն գործերը կը խորհիմք և կը գործեմք. յառաջ ունինք ազգադարութիւն ըրինք որ հասկցողները հասկնան. դուք դարձեալ ձեր պաղ խորհուրդները դուրս կուտայք: Հիմա մեր խօսքին թերին լմնցնեմք: Հիմայ գործն յաջողուցինք և խնդիրը վերջը սպասելուն մնաց, կը տեսնեմ ամէն մարդ կը ջանայ թագը խլել. մէկն հաւատարմութի կը խոստանայ, մէկն իրեն հաւատակցութիւնը կը յայտնէ բարձրաձայն. միւս մը ալ ամէնուն մէկ մէկ անհաւատարիմ գործերը կը յայտնէ զինքը անմեղ ցուցնելով: Այս կէտին էր որ գլխուն թասը աշխարհիս մէջ գտնուած զանազան և նորանոր նիւթերով լեցուց, նորանոր անուն ինձ կնքեցի և խորհիլ ըսկսայ. ազգասէր գնացած էի, ազգատեաց վերադարձայ. այսուհետեւ ո՞վ ինչ գիտէ թող ըսէ:

Անխոհ: Շատ խօսելուն շատ արդիւնք չհետեւիր. եթէ կուզէք և ներելի է մեզ. քիչ մ'ալ մենք խօսիմք և այս խօսքս առաջին և վերջին պիտի ըլլայ: Արդէն քաջ գիտեմք որ երկրագունդի շարժումն անդադար է. եթէ այսպէս է, պիտի հետեւցնեմք թէ ամէնն ալ պէտք են շարժել և գործել, եթէ ազգասէրները ճշմարիտ ազգասէրներ ըլլան, ազգի մը փոխճանին մտիկը կը նշանակէ այն. քանի որ ազգասէրն ըլլայ. ըստ որում մարդը ագիտութեամբ գրեթէ միշտ կը հակառակի հաւատարութեան, ազգատեացներ ալ պիտի գան յառաջ: Բայց ատոնց ամէնը գործ և արդիւնք պիտի ունենա՞ն թէ ոչ, այն մեր խորհրդեանը նիւթ ըլլալու արժէքը չունի. Քանի որ մէջ տեղը գտնուողները ազգասէր և ազգատեացներ են, գուժաբերներու և աւետաբերներու յառաջ գալն անշուշտ է: Թող ամէնք ալ ազատ խօսին, ինչ որ կը բերէ թելադրութիւնը կամ խորհուրդը. գործն անխռով մնալն է:

Ամէնքն ալ կը մեկնին:

ԱՐԿԱԾՔ

ԱՐԻՍԹՈՆՕԻՒՍԻՆ

(Շարունակութիւն. տես թիւ 5:)

Գետոյն երկայնութեամբ յառաջանալով Սոփրոնիմ՝ պարզ և միջին, բայց գեղեցիկ ճարտարապետութբ ճիշդ և ուղիղ համեմատութեամբ շինուած տուն մը տեսաւ: Այնտեղ ոչ մարմարին, ոչ ոսկի, ոչ արծաթ, ոչ փղոսկր և ոչ ծիրանեայ կահկարասիներ գտաւ, այլ ամեն բան մաքուր և լի շնորհօք, եւ վայելչութեամբ բայց առանց շքեղութեան: Աղբիւրակն մի գաւիթին մէջ կը հոսէր, և կանաչ գորգի մը երկայնութեամբը փոքրիկ ջրանցք մը կը կազմէր: Բուրաստանները ընդարձակ չէին, ուր մարդիկներ կերակրելու օգտակար տունկեր և պտուղներ կը գտնուէին. պարտիզին երկու կողմէն երկու անտառակներ կ՚երեւէին, որոց ծառերը՝ գրեթէ իրենց մօր սոյնիքն երկրին պէս հինօրեայ էին, և որոց թանձրախիտ ստուերը այնպիսի ստուեր մը կամ շուք կընէին, որ արեգական ճառագայթներէն անգամ անթափանցելի կըլլան: Անոնք սրահի մը մէջ մտան ուր քաղցր ճաշ մը ըրին, այնպիսի կերակուրներով զորս բնութիւնը պարտիզաց մէջ կը մատակարարէ. և ոչինչ հոն չէր տեսնուէր այն ամէն բաներէն, զորս մարդկանց փափկութիւնը քաղաքաց մէջ որոնելու կ՚երթայ այնքան հեռի և այնքան թանկագին. ասոնց կերակուրն էր կաթ, այնչափ քաղցր, որքան էր Ապողոնի՝ Ադմեթ թագաւորի մօտ հովուութիւն ըրած ժամանակ կթած կաթը. և մեղր՝ որ աւելի ընտիր էր Սիկիլիայի մէջ եղած Հիբլայի մեղուաց մեղրէն. կամ Հիմէթ լերան Ատտիկէի մէջ. կային նաեւ պարտիզին կանանչեղէններէն և պտուղներ, զոր նոր ժողոված էին:

Ներքսարէն աւելի զովացուցիչ գինի մը կը հոսէր մեծ ամաններէ՝ քանդակուած բաժակներու մէջ. Այս սակաւապէտ և ժուժկալ, բայց քաղցր և խաղաղիկ ճաշի միջոցին, Արիսթոնօիւս չը կամեցաւ երբեք սեղան նստիլ: Նախ և առաջ ձեռքէն եկած ջանքը զանազան պատրուակներով 'ի գործ դրաւ, իւր համեստութիւնը ծածկելու համար, բայց վերջապէս երբ որ Սոփրոնիմ ուզեց զայն ստիպել, յայտնեց որ ինքը երբեք չը պիտի սեղանակից ըլլայ Թոռանն Ալինի, որուն այնքան երկար ատեն միեւնոյն սրահին մէջ ծառայած էր:

Ահաւասիկ կը սէր Արիսթոնօիւս Սոփրոնիմին, այն վայրը՝ ուր այն իմաստուն ծերունին սովորութիւն ունէր կերակուր ուտելու. ահա իրեն բարեկամաց հետ խօսակցելու տեղը. ահա իրեն խաղացած տեղը. ահա այն վայրը, ուր նա կը ճեմէր Հեզիօտ և Հոմեր կարդալով. ահաւասիկ վերջապէս այն վայրը, ուր նա գիշերը կը հանգչէր: Այս պարագաները յիշելով իրեն սիրտը կը խանդաղատէր և արտասուքը աչքերէն կը հոսէր: Ճաշէն զկնի Արիսթոնօիւս ցուցուց Սոփրոնիմին այն գեղեցիկ մարգագետինը, ուր իրեն բառաչող բազմաթիւ հօտերը կը թափառէին գետոյն ափանց վրայ. յետոյ նշմարեցին ոչխարաց հօտերը որք պարարտ արօտներու վրայ արածելէն կու գային: Մայրերը որք շարունակ կը մայէին և լի էին կաթով, իրենց փոքրիկ և ցատկռտող գառանց հետ հոն կընթանային:

Արիսթոնօիւս՝ Սոփրոնիմին ցուցնելով այս տունը, գերիները, խաչինքները և երկիրը որ այնքան պըտղըւեր դարձած էր բազմաջան մշակութեամբ, անոր այս խօսքերն ըսաւ. «Շատ ուրախ եմ՝ զձեզ տեսնելով ձեր հայրենի հին ստացուածոց մէջ որուն վրայ աշխատեցիք ես գոհ եմ ամենայնիւ. որովհետեւ ձեզ դառանգել կուտամ այն վայրը՝ ուր այնքան երկար ժամանակ Ալինին ծառայեցի, խաղաղութեամբ վայելէ այն որ անոր կը պատկանէր, ապրէ երջանիկ. և պատրաստէ քեզ աւելի քաղցր վախճան մը քան անորինը: Արիսթոնօփւս՝ մի և նոյն միջոցին անոր պարգեւ մը ըրաւ այն բարիքէն, որինօք վաւերացեալ բոլոր հանդիսակատարութեամբ, և յայտնեց որ իրեն ժառանգութենէն բոլորովին կը զրկէ իւր բնական ժառանգները, եթէ անոնք իւր բարերարին՝ Ալինի Թօռան ըրած պարգեւին դէմ գնելու չափ ապերախտ գտնուին: Բայց այսքանն ալ Արիսթօնօփւսին սիրտը գոհացնելու համար բաւական չէր: Իւր տունը ամէն յառաջ, զայն նոր կարասիներով բոլորովին կը զարդարէ որոնք պարզ, ճշմարտապէս համեստ և վայելուչ, բայց մաքուր և հաճոյ էին: Շտեմարանները Պէմեարի հարուստ պարգեւներով լեցուց և մառանները Քիօսի գինիով, այն որ Հիպէի և Կանիմեսի ձեռամբ մեծին Արամազդայ սեղանին գործածուելու արժանի է. փրամենեան գինի ալ բաւական լեցուց հանդերձ Հեմեթի եւ Հիպլոսի մեղրի առատ համբարներով Սամիկէի իւղով, որ նոյն իսկ մեղրին չափ քաղցր է: Անոնց վրայ յաւելցուց նաեւ շատ մը նրբաթել և ձիւնէն աւելի ճերմակ բուրդեր, որք այն փափուկ ոչխարաց կողպուաներըն էին, որ Աիկլիպայի պարարտ արօտներուն մէջ և Աբրոտի լերան վըրայ կը ճարակէին: Ահաւասիկ այս վիճակին մէջ տեսաւ իւր տունը Սոֆրոնիմին ծերունին Արիստոնօփւս, անոր տուաւ նաեւ յիսուն տաղանդ դրամ, և իրեն ազգականաց այն ինչքերը պահպանեց, զոր Կղազոմէն թերակղզւոյն, որ Իզմիրի շրջականերըն է, Լեպետէի և Կոլոփոնի մէջ ունէր, և որք բաւական մեծ արժողութիւն ունէին:

Պարգեւատուութիւնը լմնցնելով Արիստոնօփւս նաւ մտաւ, Իօնի վերադառնալու համար: Սոֆրոնիմը՝ այսպիսի անհամեմատ երախտեաց և բարերարութեանց վրայ հիացած և գորովուած արտասուաթոր աչօք մինչեւ նաւը անոր ուղեկցեցաւ, զայն միշտ իրեն հայր կոչելով և իւր բազկաց մէջ սեղմելով: Արիսթօնօփւս յաջող և երջանիկ նաւարկութեամբ մը իսկոյն իւր տեղը հասաւ. իրեն ազգականներէն և ոչ մին համարձակեցաւ դանգատել այն պարգեւին վըրայ, զայն որ Սոֆրոնիմին ըրած էր: Ես իբր իմ վերջին կամքս, կ՚ըսէր նա կտակիս մէջ հրաման ըրի որ եթէ ձեզմէ մէկը ընդդիմանայ այն պարգեւին զոր ըրի Ալինի Թօռանը, բոլոր իմ ըստացուածներս ծախուին և Իօնիի աղքատաց բաշխուին:

ԱՆՄԱՀՈՒԹԻՒՆ ՀՈԳՒՈՅ

Վաթսուն տարիէ ՚ի վեր յուսահատութեան և մահուան խրատունքը փաստաբանեցաւ. այժմ կը ձեռնարկեմ ես յուսոյ խրատունքը պաշտպանելու: Բան մը զիս կը դրդէ ձայնըս բարձրացնել և իմ դատս յատեան կոչել: Այլ տաղտկացայ մարդու ուղղեալ սա խօսքերը լսելէն. [illegible] բան չունիս, յուսալու բան չունիս, [illegible] մէջ բոլոր սրտէն պարտական չէ՞ս ։ Դուցէ վերջապէս՝ հաւատոյ, Թերևս իր վեհ ծագումը մոռնալով՝ հանի մինչև այն կէտը, որ ինքզինք համարի՝ արդարև՝ իբրև գործարանաւոր նիւթ մը. որ զինքը շրջապատող առարկաներէն և 'ի պիտոյից միայն՝ մտաց լոյս կ'ընդունի, մինչև ըսել ապականութեան՝ դու իմ մայրս ես, և որդանց՝ թէ եղբարք իմ էք և քորք. դուցէ իրականապէս համոզուի թէ՝ առ Արարիչն ունեցած որ և է պարտականութենէ ազատ է. և դուցէ իր փափաքներն ու գերեզմանին դուռը կանգ առնուն, և անասնոց վրայ ունեցած չնչին առաւելութեամբ գոհ՝ [illegible] անցնի անոնց պէս, և իրեն պատիւ համարի միայն՝ ունայնութեան իշխանական դաւաղանը ունենալ ։ Ես կ'ուզեմ զայն ջախջախել իր ձեռքին մէջ. Թող հասկնայ իր ինչ ըլլալը, թող ուսանի իւր մեծութիւնը, ինչպէս նաև իւր հպատակութիւնը ։ Ամեն ձիգ եղաւ ախտաւորները ընկճելու. զուր փորձ ։ Կան միշտ, և ցոյց պիտի դըրուին ։ Անոնք մարդու բնութեան մէջ գրուած են. ամեն դար, նաև ամենէն մոլիներն իսկ՝ զանոնք ընթերցան, ձայն տամ անոնց՝ որ երեսն և ինքնին հաստատեն թէ՝ Աշխարհս կրօնք մը կայ. Ո՞վ պիտի համարձակի զանոնք 'ի դերեւ հանել, և անոնց վկայութեանը հակառակել իր առօրեայ խորհուրդները ։ Տեսնենք՝ ով պիտի համարձակի այժմ իսկ, երբ զարթուցանեմ այն ազգերը՝ որ անհետացան, և գումարեմ այն ժողովուրդները՝ որ այլ ևս չը կան, որ իրենց աճիւնէն կանգնին և գան տալ վկայութիւն՝ 'ի պաշտպանութիւն իրաւանց Աստուծոյ և անմահ վիճակի մարդոյ ։

Եւ ինչո՞ւ կորնչի ։ Ո՞վ դատապարտեց զինքը։ Ինչո՞վ կրնայ հաստատել թէ անիկայ իւր էութենէն պիտի դադրի ։ Մինթէ այս մարմինը՝ որ կը լուծուի, սա ոսկերոտիքը, սա աճիւնըն է մարդը. Ոչ, ոչ, փիլիսոփայութիւնը՝ կարի իսկ կը վարանէ գերեզմանը կնքելու ։ Թող նա մեզի ցոյց տայ ուրիշ մասունքներ մեր բանին մէջ և այն ատեն պիտի հաւանինք թէ լուծանելի է ։ Իմաստասիրութիւնը այս բանը չըրաւ, և երբէք չը պիտի կրնայ ընել. երբէք չը պիտի կրնայ բաժնել արդարութե՞ն գաղափարը. և ոչ ալ ըմբռնել զայն իբրև բաժանեալ այնպիսի զանազան մասունքներու, որոնք իրարու մէջ մեծութեան, ձևուի և հեռաւորութեան վերաբերութիւններ ունենան ։ Կամ մի է արդարութիւնը, կամ չը կայ բնաւ ։ Իսկ փափաքը, սէրը և կամքը՝ որոշ կ'ըմբռնու՞ք արդեօք թէ նիւթի հանգամանք և տարածութեան պարագաներն եղած ըլլան ։ Որոշակի կը տեսնու՞ք արդեօք թէ իրականապէս պարզ ըզգացմունքը՝ բաղկացեալ տարիներու կերպ մը դրութեննէն ծագում առած ըլլայ, և թէ անկիր գոյութեց խառնուրդը՝ առաջ եկած ըլլայ գործոն գոյութիւն մը, կարող ճանաչելու. կամենալու և սիրելու ։ Ո՜վ հիանալեաց գործարանաւոր կազմութեան ։ Սա միտքը՝ զոր ոտքիս տակ կը ճմլեմ միայն ջերմութեան, իւր մասանց նոր կերպարութեան մը կը կարօտի ուրեմն, որ իմացական ըլլայ. երկինքը գրուած է անոր օրէնքները հաշուէ անբաւ միջաց ձեռքէ՝ անցնի ոչ միայն տեսանելի, այլ և երևակայելի աշխարհներէն ալ անդին՝ փնտռելու համար անեզրութիւն մը՝ որ բաւական ըլլայ զինքը գոհացնել. չափանթաղ՝ որուն սահմանը չէ բաւական ։

Արդարև կը ցաւիմ այս ցած պատճառանաց մէջ թարթափող ակար մտաց վրայ. բայց թէ տակաւին այդ վիճակը իրենց հաճելի երեւի, եթէ սթափելէն կը խորշին, իրենց՝ ինծի տուած սոսկումը և զզուանքը բացատրելու խօսք մը չեմ՝ կարող գտնել:

Սակայն ինչ կ'ըսեն. վկայութեան կը կոչեն զգայարանքները. կ'ուզեն որ կեանքը դադրի այն տեղ՝ ուր աչաց տեսութիւնը կը դադրի, նման այն տղային՝ որ արեգակը հորիզոնէն վար իջած տեսնելով՝ զանիկայ յաւիտեանս մարած կարծէ: Բայց ինչ, միթէ լուծանելի գործարանաց տխուր տեսարանէն զարմացող միայն իրե՞նք են: Միթէ գերեզմանի լռութիւնը լսող իրե՞նք եղան առաջին: Վեց հազար տարի կայ որ մարդիկ կ'անցնին մարդուս առջեւէն իբրեւ ստուեր. և սակայն մարդկային սեռը զգայարանաց պատրանքներու դէմ ամենակարող օրէնքով և անտեսանելի զգացմամբ մը պաշտպանուած՝ մահուան մէջ ուրիշ բան չը տեսաւ, բայց եթէ գոյութեան փոփոխութիւն մը և սակայն հաճոյքներով զեղծեալ քանի մը մաքերու ընդդիմութեան հակառակ՝ պահեց միշտ անմահութեան վսեմ աւանդը՝ իբրեւ ընդհանուր բանականութեան վարդապետութիւն: Արդ այն մերժողները՝ թող զատուին մարդկային ընկերութենէն՝ եւ երթան մեկուսի ճարակ տալ որդանց սիրտ մը, որ արդարութեան և ճշմարտութեան սիրով կը տոփէ. եւ միտք մը, որ զԱստուած կը ճանաչէ,

(Վամընէ)

Թարգ. ի Գաղղ.
Սագուստ Սարգ. Յ.
Սագոսփեան:

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՄԵԾԱՊԱՏԻՒ ԺՈՂՈՎ.

(Շարունակութիւն, տես թիւ (5).

Եթէ առանձին հանգամանքները շատ ընտանիքներու և առ հասարակ այսօրուան ընտանեկան յարաբերութիւնները անհամար դէպքերում հարկաւոր են կացուցանում աղջկերանց վարժարանների և թոշակարանների (Densionate) տնային զարգացման տեղ փոխարինելը, այնու ամենայնիւ նոյն չափ էլ շատ անգամ հանգստութեան և անփութութեան գործ է, յառաջ բերելով դէպի այն, ինչ որ սովորութիւն է դառել. որով ծնողաց ընտանեկան պարտաւորութեան զգացմունքը կորչում է: Յետոյ հեշտութեամբ ծնողները՝ զարգացումը այն բաների կարգն են դասում, որոնց մասին հոգացողութիւն անելը՝ իրանց կը խընայեն եղած վարժատունները. և այսպէս կարծում են թէ շատ բան են արել, երբ փող են ուել. Զարմանալի է, թէ ինչ յառաջադիմութիւն է արել այստեղ էլ աշխատութեան բաժանումը և գործատարի լուծումը.

Իւստուս Մէօզերը գովաբանելով տալիս է թէ՝ հին բարի ժամանակին իւրաքանչիւր տուն դեռ իրա սեպհական ոստայնանկայ սեպհական (ձախարակ) (Vebstuhe) ունէր գոնէ իրա ժամանակին խծուծը (Spinnrocken) պակաս չէր. և տան թխած հացը և եփած կարկանդակը (Ruchen) ամենից համով էին: Մէկ չի խոստովանիլ թէ՝ քաղաքներումն էլ մի մեծ օգուտը այնտեղից էր, որ մարդիկը և մեքենայքը տանից դուրս զանազան տեսակ գործեր են վերառնում, որոնց մասին հարկաւ պիտի իւրաքանչիւր տնային կատարելութիւն հոգւոր, գործ դնելով շատ ժամանակ և զօրութիւն։ Բայց 'ի հարկէ շատ ափսոսալու է, որ այս ճանապարհով ընտանիքներում միշտ աւելի տարածւում է հեռանալը և այնպիսի պարտաւորութիւններից էլ փախչելու միտքը, որոնք ընտանիքներին մերձ են բնականաբար և գլխաւորապէս։

Վարժարանական զարգացում մի միշտ կարողացել են գործ դնել միայն տղաները․ բայց աւելի բարձր վարժարանի համար միջոցները աւելի շուտով են հոգացւում։ Դարերով կային Գիմնազիաները և նրանց հետ էլ աղջկերանց միջակ վարժարանները․ Կամաց կամաց կանանցներին էլ երեւցաւ մի աւելի մեծ կրթութեան հարկաւորութիւն և հասարակական վարժարանների եղած յարաբերութիւնը էլ կարգին չ'թւեցաւ և կառուցւեցան դուստրների բարձր վարժարաններ որ կանանց էլ առաջուանից աւելի բարձրացնեն ժամանակի ընդհանրական կրթութեան աստիճանին վերայ։ Այս անունը այս դարու քառներորդ տարուց առաջ՝ առաջ չ'է գալի։ Բարձր դասակարգերի (մեծատուններ) երեխաների համար․ առաջնոյ եղած վարժատունները շատ պարզ ձեւ ունէին ուսանելու․ և այն տեղ էլ տասն և չորս տարեկանից բարձրը շատ հազիւ էր գտնւում։ Դուստրների աւելի կատարեալ կրթութե̃ մասին այն ժամանակը զանազան կերպով հոգւում էին էին հենց ընտանիքում։ Այս աւելի դժուարացաւ կանանց կրթութեան վրայ բարձրացած պայմաններով և տակաւ նախապատիւ երեւեցաւ բոլորովին վարժարանին և նրա կանոնաւորուած կարգադրութիւններին թողնել այս հոգացողութիւնը։ Աղջկերանց վարժարանները ընդարձակեցին իրանց ուսման ձեւը և իրանց դասատան կարգերը և անուանեցան դուստրների բարձր վարժարաններ։

Այս վարժարաններին ձեռնարկելը աւելի առաջ եղաւ․ քանի թէ մարդ ուղղապէս մտածել կարողացան, թէ ինչ է այսպիսի վարժարանի սեպհականութիւնը և ինչ նրա զանազանութիւնը տղերանց բարձր վարժարանից։ Շատ որոշ կարելի է ասել, թէ ինչ է գիմնազիումը, և ինչ պիտի լինի․ բարձր դուստրների բարձր վարժարանի գաղափարին վրայ թողնւում է դեռ շատ մթութիւն և որոշեալ կազմուած չ'ունի։ Աղջկերանց վարժարանի ամբողջ էութիւնը նման է մի այգու, որի մէջ մեծ հոգացողութեամբ կապած ածուների մօտ դեռ շատ վայրենի բուսած տեղեր էլ կան․ այսպէս էլ է իսկապէս մի արհեստական կանոնաւորութի̃ հակառակ ուղղակի այս սահմանում յաճախ շատ բարեգործական պարզ բնականութեան։

Դուստրների բարձր վարժարանները կան և գրաւում են այն բոլորի մտադրութիւնը և ուշադրութիւնը, որոնց սրտումն է աճող սերնդի բարօրութիւնը։ Մարդ չպիտի կարծի․ թէ ընկերութեան պարտաւորութիւնները և միւս կարգերի յարաբերութիւնները ճանաչելու համար աղջկերանց անհրաժեշտ հարկաւոր է այսպիսի վարժարան գնալ։ Բայց մարդ պիտի խոստովանի թէ քանի որ մի երեխայի համար տնային դաստիարակութիւնը և զարգացումը օգտաւէտ է, միւսի համար շատ անգամ վարժարան գնալը այն նախապատուութիւնը ունի, որ առ հասարակ այսպիսի վարժարանները մա-

մանուկի այժմեան հանգամանքներին նայելով՝ անհրաժեշտ են դառնել և շատ դէպքերում մի մեծ բարեգործութիւն են, որը էլ աւելի կը մեծանար, եթէ ծնողները կամենային վարժարանին աւելի օգնել և երախանց մասին տուրքը միաբանական համարել, որը կարօտում է շարունակաբար դէմ առ դէմ բացատրութեան։

Այժմ բանը կարող է միայն նըրանում լինել, որ միշտ աւելի պարզ ըմբռնուի, սահմանուի և աւելի որոշ իրագործուի, ինչ որ անելու են և կարող են դուստրների բարձր վարժարանները։ Այն ազդու միջոցը և սէրը, որը Գերմանիայում մանկավարժութեան բոլոր խնդիրներին է տըրւել, այս սահմանումն էլ անուրանալի է։ Այս տեղ քանի տարիներով եղած յառաջադիմութիւնները գիմնազական վարժարանների շինարարական յարաբերութիւններում՝ և գեղեցիկ փորձութիւնները միւս գըրուածներում աչքի առաջի են, որոնցից միեւնոյն ժամանակ առաջանում է, թէ մարդ չը պիտի խաբուի դեռ եւս յաղթելի արգելքների և դըժուարութիւնների վրայ։ Ուզում եմ նրանցից մի քանիսը ցոյց տալ, որոնք մասամբ դուստրների բարձր վարժարանի էութեան մինչ օրդի զարգացման մէջ դեռ մի կողմ չեն որոշուել, մասամբ սխալ նայուլին ինչպէս վերաբուսեալ բաներ (Aussiuchse), որոնք մի քանի վարժարաններում գտնըւում են առանց ամբողջ ձեւի արժանաւորութեանը վնաս տալու։

Իրական վատ դրութիւններին պատկանում է ամէնը, ինչ երիտասարդների վարժարանների օրինակից չափից դուրս կախումին վերաբերում է։ Չեմ յապաղում շուտով այստեղ հաշւելու երեխանց բազմախումբ ամփոփումը, ինչպէս աղջկերանց շատ վարժարաններում և դասատուներում լինում է։ Կանանց բնութեան հակառակ է այս։ Տղերանց համար առանձին զարգացումը հազիւ անգամ է օգտաւէտ։ Նրանք պիտի միանգամ կարգ մտնեն և անդամ դառնան և պիտի վաղ սովորին ընկերութեան կանոնը ճանաչել և պահպանել։ Աղջկերանց շուտով վըշտալի (Verletzliche) հոգեկան բարութիւնը հեշտութեամբ, առանց վնասւի՝ չի դիմանալ մի այսպիսի օրական բազմագումար ժողովի։ Այսու ամենայնիւ ունինք այն միջակ կարգի լաւ վարժարանների հետ միասին, որոնք իրանց ուսանելու ձեւումը և ժամանակին էլ կանանց յատկութեան պահանջած չափը պահպանում են, շատ վարժարաններ էլ չափից դուրս աշակերտուհիներով, չափից դուրս դասատուներով, չափից դուրս առարկաներով, և չափից դուրս ուսուցիչներով։

Շատ վարժարաններում աշակերտուհիների թւի անհամեմատ բազմանալը պատճառը նրանումն է, որ շատ ծնողներ, որոնց դուստրների համար տարրական կամ միջակ վարժարանը լիապէս բաւական է, չիմանալով կամ նմանողապէս մեծ արժանաւորութիւն են տալիս։ Եթէ մի քանի ժամանակ իրանց երեխանց այն պատուին և օգտին են մասնակից անում, որին յոյս ունին դուստրների բարձր վարժարանից, որով միայն երեխայքը կենցաղավարութեան մէջ շատ անգամ մոլորում են։ Երբեմն միեւնոյն հիմունքն է այնպիսի վարժարանների բազմանալում, որոնցով փոքր քաղաքների հասարակութիւնները չեն կամենում միւսներից յետ մնալ։

Կան վարժարաններ 400, 500, 600, աշակերտուհիներով։ Մագդեբուրգ քաղաքի դուստրների բարձր վարժարանը 800ից աւելի ունի այժմ Դասակարգուած աստիճանները, որոնք երեխաները բարձրանալով պիտի անցնին մինչեւ 6,8,10 ին։ Աշակերտուհիների թիւը հասնում է մօտ 50,60,70 ին ստորին և միջին դասատուններում, և վերջիններումն էլ շատ անգամ 30,40 ից բարձր է գընում։

Ոչ մի եզրակացութեան չէ կարօտում, թէ էլ կարելի լինի խօսել այսպէս մեծ վարժարաններում նախայիշեալ ընտանեկանութեան վրայ և այսպէս բազմաթիւ դասատուներում անհատացնող (Individualiserende) դաստիարակութեան, որ աղջկերանց աւելի անհրաժեշտ է, քանթէ տղերանց. յետոյ թէ իսկական զարգացումը և նրա մասին՝ սան և վարժարանի միասին ներգործութիւնը՝ այսպիսի հանգամանքներում անչափ դըժուարանում են, այո, շատ դէպքերում էլ անկարելի լինում։ Նոյնպէս շատ անգամ խափանիչ են զարգացուցիչ ներգործութեան միութեանը՝ այն իրար հետ միասին դասատու վարժապետների յաճախ փոփոխուելը և մեծ թիւը, որոնցից շատերը իւրաքանչիւր վարժարանում միայն մի քանի ժամերով են զբաղուած։

Ինչ որ ուսանելու առարկաներին է վերաբերում, սակաւ առ սակաւ այնքան են շատացել դուստրների մի քանի բարձր վարժարաններում, որ որանք կանանց իրական (րէալական) վարժարաններ են դառել։ Մի քանի ցուցակներում 12 զանազան առարկաներ են գրուած և իւրաքանչիւր դասատունում շաբաթական մօտ 34 ժամ ուսանելու։ Բարձրանալով այն առարկաներին են հասնում, որոնք առ հասարակ աղջկերանց վարժարանի միւս կողմին են գտնւում և անպատճառ առանձին զբաղման թողնելու է։ Տղերանց բարձր վարժարանները արդէն երկար ժամանակից հետէ չեն կարողացել իրանց պաշտպանել առարկաների շատութեանց։ Այն տեղ վատը լաւանում է վարժարանների զանազան տեսակովը՝ և այն հավանաւորութեամբ, որ ամեն տեղ թէ գիմնազիում և թէ իրական վարժարաններում աշակերտ անձնական ջանասիրութեան վրայ է. այս պատճառով էլ պատահում է, որ այնտեղ մի քանի բարձր դասատներում անզգոյշ միակողմանիութեամբ գըլխաւորապէս մի կամ քիչ բան են անում, որպէս զի նրանով հարկաւոր բաները առաջ տանեն։ Աղջիկները իրանց բնութեան համեմատ՝ բոլորովին ուրիշ յարաբերութիւն ունին դէպի առարկաները և անձինքը։ Տըղայն առաջ բանն է ուզում և նրան հետ էլ վարժապետին պատուում եթէ տեսնում է, որ նա իրան օգնում և բարին կամենում է։ Աղջիկը շատ դէպքերում աւելի աշխատասէր է վարժապետի, քանթէ բանի համար, որովհետեւ նա վարժապետին սիրում է, աշխատում է անխիղճ յուսալով նրա բաւականութեան վրայ։ Շատերի այս խիստ անձնատուր լինելուն միանում է պարտաւորութեան մի երկիւղալի զգացմունք և պատւոյ մի եռանդոտ ցանկութիւն, որը ամենազգալի կերպով կը գրգռուի շատ անգամ գովասանքներով և պարսաւանքներով. նոյնպէս և տղերանց վարժարաններից փոխ առած այս կամ այն նախանձը շարժելով (Certiren) Լատիներէն (Certare) և այլ միջոցներով.

Պիտի շարունակուի։

ԴԱՏԱՍՏԱՆ ԸՆԴԴԷՄ ՔՐԻՍՏՈՍԻ

Ճշմարիտ պատկեր և օրինակ անիրաւ դատաստանին ընդդէմ Քրիստոսի, որ ՚ի Վէննայ ՚ի ներքոյ երկրի ՚ի վէմ քանդակեալ գտաւ, և ըստ այնմ գաղափարի զպատճէնն օրինակեցաք առանց այլայլութեան, որ է այսպէս։

Սարէա

Բարձցուք ՚ի մէնջ զմոլորեցուցիչն, զ՛ ՚ի կորուստ ծնեալն Հայրենեաց։

Եղիէր

Եթէ արդար եւս իցէ ՚ի մահ դատեսցի, քան զժողովուրդն քարոզութեամբն մոլորեցուսցէ։

Նիկոդեմոս

Մի՛թէ՞ օրէնքն մեր դատի՛ն զոք, եթէ չըլսեն ՚ի նմանէ կամ չը գտանեն ինչ ՚ի նմա։

Տիարաբիաս

Արդ՝ մոլորեցուցանէ զժողովուրդըն, պարտաւոր է մահու։

Յովրամ

Ընդէ՞ր թողումք զայրս զայս, զի արժանի է մահու։

Յովսէփ արիմաթացի

Արդարև պատուհասակոծ լինիմք, եթէ ոչ ոք իցէ ընդ ամենայն քաղաքըս, որ զայր արդար պաշտպանեսցէ։

Սապինթ

Թէ արդար իցէ և թէ անիրաւ, բայց զի ոչ հնազանդեցաւ օրինաց ծերոց, չէ՛ արժանի կենաց։

Յովսափաթ

Կապեալ և կաշկանդեալ ՚ի շղթայս յաւիտեան մնասցէ։

Պտղեմէոս

Եթէ արդար է և ոչ անիրաւ, ընդէ՞ր ապա յապաղիմք, և ոչ փութանակի ՚ի մահ կամ յաքսորս դատիմք։

Տիբար

Օրէնք ոչ վասն այլոց, եթէ ոչ վասն չարագործացն է հաստատեալ. վասն որոյ խոստովանեսցի այրս այս զյանցանըս իւր, և ապա դատապարտեսցի։

Բարքաբար

Զմոլորեցուցիչն՝ որ զհայրենին և զամբօխն խռովեցուցանէ, բառնալ պարտ է։

Եքիաս

Յանցաւորն՝ չէ անծանօթ պատճառաւ ՚ի մահ մատնեալ։

Թերայ

Լաւ է զնա յաքսորս դատել կամ առ կայսր առաքել։

Դամէք

Այսպէս սպառնասցուք, զի մի հակառակեսցի մեզ. ապա թէ ոչ հընազանդեսցի, պատժեսցուք։

Սովբաթ

Ոչինչ օրէնք զանպարտն երբէք ՚ի մահ մատնեն, և զինչ ապա մեղաւ այրս այս։

Թոզմոթիմ

Ընդէ՞ր եղան օրէնք, եթէ ոչ պահանէին։

Մեսայ

Եթէ արդար ոք է, դարձուցէք առ նա, ապա թէ անիրաւ հանցուք 'ի մէնջ:

Բաբուն

Բայց ընդէ՞ր եղաւ օրէնք, եթէ ոչ զի պահեսցի:

Քահանայապետն Հրէից վճիռ, կամ մարգարէութիւն

Ոչ գիտէք բնաւ երբեք զինչ խընդրէք, զի լաւ է առն միոջ մեռանել· քան ամենայն ժողովրդեան կորնչել:

Սիմոն քորուն

Զո՞ր օրէնս ունի ապա մոլորեցուցիչն:

Պիղատոսի պոնտացւոյ վճիռ

Քաւեալ եմ ես յարենէ արդարոյդ այդորիկ, առէք 'ի ձեզ, և ձեզէն դատեցարուք:

Ի ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻՆ

Գերագոյն սկխաջահդ խորհրդակիր
Էին պարգեւաց անօթ գերընտիր,
Անսկիզբն էին շնորհաց որդեգիր
Միածնին փառաց ժառանգ
շուտամիր:
Բաբունոյն բարուց շառաւիղ ընտրեալ,
Հրոյն սիրոյ բոց 'ի քեզ բորբոքեալ
Գետիւք արտասուացդ աշխարհս
ծովացեալ,
Այծ երամակ հօտս յայն ապխտակացեալ:
Իակուհւոյն սրբոյ անձառ սիրահար
Ի սէր սիրելւոյն մետուղիեան
կամար,
Առ սէս քո եկին զոյգ արփիաբար
Անհաս մանուշակն վարդն
անուշաբար:
Գագաթ սուրբ տեղւոյն փայլակն
աննըման
Էջ յառաւօտու 'ի գիրկ մաքրական
Բակ առեալ 'ի շող լուսն անեղական
Երկակի 'ի դէմս ընտր զանազան:
Ուրախուք վտակաց արփմամբ
զմայլեալ·
Յորդահետ գետոց անդ յեդէն
բղխեալ·
Կրկնակի հոգւով խապառ
յըղփացեալ
Քան զամենեսեան գերազանց
գտեալ:
Բենական լուսոյն օթոց հրաշաւոր
Ազքանազեանս տան ձիր զարմանաւոր·
Զմատեանդ մեզ ձօնեալ բանս
աղերսաւոր
Առ սէրդ մեզ նպաստ ո՜վ տէր
սուրբ Գրիգոր:

ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆՔ

Ամսոյս սկիզբները դարձեալ կատարուեցան տէրունական հանդէսները սուրբ Յարութեան տաճարի մէջ ամենայն խաղաղութեամբ· արդէն գիտցողները քաջապէս գիտեն որ ամէն քրիստոնեայք ալ իրենց այս տարեկան հանդէսներու խաղաղութեամբ անցնիլը Տէրութեան կողմանէ եղած զգուշութեան միայն կը պարտին: Վասն զի որչափ որ եկեղեցին և կրօնքը կ'արգելուն ժողովրդեան ընկերութեան մէջ խաղաղութեամբ գործելու, դարձեալ ժողովրդեան խաժամուժ ամբոխի ապիտութիւնը տեղի կուտայ սոյն տգեղութեան եկեղեցեաց որբափայրին մէջ պատահելուն։ Ինչո՞ւ։ — Նախանձախնդրութեամբ, ըստ որում Յունաց եկեղեցականներն իրենց ժողովրդեան այնպէս կը քարոզեն որ սուրբ Յարութեան տաճարի մէջ իրենք միայն կրնան Թափոր դառնալ և գերեզմանին վրայ պատարագել. և ուրիշ ազգ մը երբէք իրաւունք չունի հոն պատարագելու։ Խաժամուժ ամբոխն ասոր համոզուած՝ կուզէ որ միշտ իւր ազգը տեսնէ նոյն տաճարին մէջ և երբ կը պատահի որ նոյն խաժամուժ ամբոխը տեսնէ թէ Հայերն ալ իրենց հետեւակներով(1) մեկտեղ ու Լատինները ալ Թափոր կը դառնան այն տաճարի մէջ, ուր ձայնաւոր կարդալն եւս իրենց ազգին յատուկ կարծած էին, մէկէն 'ի մէկ իւր իրաւունքն յափշտակիչներու ձեռքէ ազատելու փութացողներու պէս կը յարձակէին միւսոց վրայ. որպէս զի զանոնք վռնտեն դուրս հանեն, և իրենց իրաւունքը միայն վայելեն։ Իսկ միւս ժողովուրդը որ ճշդիւ գիտէ թէ այս իրաւունքներն ընդհանուր է և Յոյնի չափ Հայն ալ Լատինն ալ իրաւանց տէր է այն տեղերու մէջ, կը ճնշէ անոր ոգիտական ամբարտաւանութիւնը ընդդիմանալով անոր դէմ։ Այսպէսով պատահած է մինչեւ անգամ արիւններ և մահ ժողովրդեան մէջ։

Իսկ հիմա տէրութեան զօրքերը կըկենան տարբեր ժողովրդոց մէջ տեղը և չեն թող տար երբէք իրարու մերձենալու. մանաւանդ որ Յունաց ազգը դարձեալ այնպէս կը ջանայ համոլել իւր ժողովուրդը թէ ուրիշ ազգերը չեն կրնար պատարագել Ս. գերեզմանին վրայ. և իւր այս սուտ անոնց աչքին երեւան չբերելու համար կ'աշխատին իրենց ժողովուրդը դուրս թողուլ և ներս չբերել երբ Հայոց և Լատինաց պատարագի արարողութիւններն կատարուին։

Վերջապէս թէ այսպէս և թէ այնպէս այն հին կամ անցած օրերու մէջ պատահած ոչ արիւնը և ոչ կռիւը տեղի կ'ունենան այս օրերս։

— Յոպպէէն մինչեւ Երուսաղէմ ճանապարհի կառքերը բանեցնել յոպպէի երկու վաճառականներ յանձն առած էին. սակայն վերջին օրերս լսեցինք որ պայմաններէն մէկ երկուքին նկատմամբ համաձայնութիւն եղած չէ կառավարութեան և վաճառականաց մէջ, որով հիմակուհիմա դարձեալ անգործ մնաց ճանապարհի կառքերը։

Դամասկոսի սուրբ Սարգիս եկեղեցւոյ շինութիւնը որ աւարտած էր մէկ տարի յառաջ, հիմա ծեփն սեղանները հանդերձ խաչկալօք աւարտած ըլլալով. նոյն Եկեղեցւոյն օծման խորհրդոյն կատարումը մնացած է միայն։

— Ամսոյս վերջերը Յոպպէի նաւահանգստին մէջ երկու Արաբ նաւավորներ արբած ըլլալով մէկզմէկ վիրաւորած են։

— Կալկաթայի Խաչիկեան Տ. Յովհաննէս Խաչակիր աւագ քահանայի Ս. Աթոռոյս Թանգարանին ղրկած ձեռագրացը մէջ, որ ծանուցուած են Սիոնի միջոցաւ, ձեռագիր ընդհանրական մի եւս կայ, որ նոյն միջոցին սխալմամբ մոռցուած է հրատարակելը։ Թանգարանի վերաբերեալ այսպիսի նուէրները մեծ շնորհակալութեամբ կ'ընդունուին և կը հրատարակուին։

---

(1) Յունաց և Լատինացւոց Թափորները կը շրջագային առանձին առանձին. և իրենց հետեւակն այսինքն դաւանակից ազգերն չեն կրող Թափոր դառնալու. իսկ Հայոց Թափորը դառնալու ժամանակ, Հայերն իրենց հետեւող ալ Ասորին և Խպտին իրենց առանձին Թափորականովը շուրջ կը բերեն իրենց ետեւէն, որով աւելի վսեմ և փառաւոր կ'ըլլայ Հայոց Թափորը քան միւս ազգաց։

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

ԴԱՍԱԳԻՐՔ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

Համառօտ աշխարհաբար կարեւոր դասագիրք մ՚ է, աշակերտաց համար դիւրըմբռնելի ոճով յօրինեալ Պ. Ստեփանի փափազեան։ Որուն սկիզբն Հայաստանի աշխարհագրութիւնը դրուած ըլլալով Հայկազնից սկզբնաւորութենէն այսինքն Հայկէն սկսեալ մինչեւ 1860 ազգային Սահմանադրութիւնը կը բերէ կը հասնէ Հայոց պատմութիւնը։ Ա. Մասին մէջ կը պատմուի Հայկազնից տէրութիւնը, երկրորդին մէջ Արշակունեաց տէրութիւնը. երրորդին մէջ Մարզպանաց և Կիւրոպաղատից ժամանակը, չորրորդին մէջ Բագրատունեաց տէրութիւնը, հինգերորդին մէջ Ռուբենեանց թագաւորութիւնը. վեցերորդին մէջ Հայաստանի անիշխանութեան ժամանակէն մինչեւ մեր ժամանակն այսինքն 1860 թուականը։

Կը ծախուի արժան գնով Պօլիս և ուրիշ քանի մը գաւառներ Երուսաղեմի գրատունները։

ԱՏԵՆԻ ԺԱՄԱԳԻՐՔ

Միջակ դիրքով ոչ շատ մեծ և ոչ շատ փոքր, խոշոր գրերով. Պէտք ունեցող Եկեղեցիներն կրնան գնել աժան գնով թէ Պօլիս և թէ ուրիշ գաւառները Երուսաղեմի գրավաճառաց քովերէն։

ՕՐԱՑՈՅՑ

1871 ԹՈՒԻՆ ՔՐՍՏՈՍԻ

Յօրինեալ 'ի միաբանական ուխտէն Երուսաղեմի և տպագրեալ 'ի Տպարանի Սրբոց Յակոբեանց Երուսաղէմ։

ՊԱՏՄԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ

Տ. ՄԻԽԱՅԵԼԻ ԱՍՈՐԻՈՅ

ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ

ՄԱՄԼՈՅ ՏԱԿ.

Աշխարհի սկիզբէն առնելով մինչեւ իր ժամանակը, որ Շնորհալիի ժամանակն է, պատմութիւնն ըրած է Ս. հեղինակը. հին պատմիչներէն աւելի ստուգապատումն ժամանակիցներէն առնլով. պատմութեան վերջը կը շարակարգէ չորս Պատրիարքական Աթոռոց այսինքն Անտիոքայ, Երուսաղեմի, Աղեքսանդրիոյ և Եփեսոսի, գահակալող Պատրիարքները մինչեւ իր ժամանակ Առաքեալներէն սկսեալ. որոց հետ կ՚աւելցնէ նաեւ Հայոց Կաթուղիկոսաց գաւազանագիրը Թադէոս Առաքեալէն առնելով մինչեւ Ներսէս Շնորհալիի ժամանակը։ Որմէ ետքը Պատմութեան հայերէնի թարգմանողները որ են Վարդան վարդապետ—Հայ, և Իշոխ քահանայ—Ասորի. աւելցուցած են Կաթուղիկոսաց թիւը մինչեւ Կոստանդին Ա. որոյ ժամանակն իսկ թարգմանուած է հայերէնի Հռոմկլայի մէջ։ Կ՚աւելցնէ նաեւ Հռոմայ Պատրիարքներու ցանկը մինչեւ իրեն ժամանակը։

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԱՍՏՈՒԾՄԷ ԱՆԵՐԿԻՒՂ ՄԸ

Գիւղաքաղաքի մը մէջ հարուստ մարդ մը կար ողորմած անունով, որ միշտ ողորմութիւն կ'ընէր. Ճանապարհորդներ ալ իր տունն ընդունելով ձեռքերնուն և ոտքերնուն ջուր հանելով լուանալէ վերջը՝ կը կերակրէր, ճանապարհի պարէնն ալ հոգալով ճամբու կը դնէր սրտի մօք ուրախութեամբ, և փոխարէն սրտագին շնորհակալութիւններ կ'ընդունէր։

Այս բարեգործը կամ թէ ողորմած ոգին մէկ հատիկ որդի մը ունէր որդեգիր առած ալ դստրիկ մը, իր ամենօրեայ խրատն ու խօսակցութիւնն էր որդւոյը, որ երբ Աստուած առնէ իր ծառային պարտականութիւնները, այսինքն երբ իր ժամանակը լրացած յաւիտենականութեան կոչմանն հնազանդելով հանգչի այնուհետեւ գործելէ, կ'ըսէր որդեակներս, երբ երկուքնիդ ալ առանձին առանձին երջանիկ (1) ըլլաք, ճանապարհորդին կամ թէ աղքատին պարէնի հոգացողութիւնն երբեք մտքէ մի հանէք. և ոչ միայն աղքատաց կամ ճանապարհորդաց, այլ և ագահներուն ալ եթէ պատահիք, որ ողորմութիւն կը խնդրեն. վասն զի կ'ըսէր. անոնք որչափ որ պահեստի հարստութիւնն ալ ունենան, կ'ըլլայ այնպիսի օրեր, որ անօթի մնան, և դուք այնպիսիներուն ողորմութիւն ընելով ոչ թէ ագահներու ողորմութիւն ըրած կ'ըլլաք, այլ անօթիներ կերակրած։ Եւ ոչ մի այն այնչափ, այլ կ'ըսէր եթէ տեսնէք հարուստներ որ իրենք ողորմութիւն ընելու կարող չ'են, այնպիսիներուն ալ ողորմութիւն ընելը բարեգործութիւն է, վասն զի այնպիսիները որչափ որ հարուստ կ'ըսուին դարձեալ հարուստ չ'են, ըստ որում ճշմարտապէս հարուստն այն է, որ վստահ է թէ ողորմութիւն ընելով իր ինչքը չկրնար հատցնել, կամ թէ չհատնիր։ Մինչեւ անգամ կ'ըսէր Աստուծմէ չվախցողին ողորմեցէք. եթէ կարենայք գտնել (2)։

Եկան անցան շատ օրեր և տարիներ, հասաւ արագապէս և րոպէներու վերջինը, և մահուան զանգակներ կը զարնուէին կարծես երջանիկ ծերունւոյն լսելեաց. յաջ և յահեակ երկու կողմերը կանչեց իր արու և էգ երկու պարկեշտ որդիքը. քաղցր արտասուաց կաթիլներով և երկու ակարացեալ ձեռացը մէջ իր սիրասունները չոյելով, Աստուծոյ զօրութիւնը կը կոչէր սոցա վրայ, և կ'ըսէր չտեսնեն երբէք թշնամւոյն (3) մխասը. Աստուծոյ պարգեւածին չափ աշխարհի վրայ ապրելով։ Իր ուրախութիւնն այն աստիճանի էր որ արտասուքը չէին դադրէր, և ըստ որում զինքը կը բռնադատէր չարտասուելու որդւոցը տրտմութիւն չպատճառելու համար, ուստի ոչ կարող էր շարունակ ուրախանալ, և արտօսր հեղուլ, և ոչ ալ առանց արտասուելու իւր խօսքը շարունակել. և 'ի հարկէն էր որ հեկեկանքն սկսէր։

---

(1) Թերեւս նոյն երկրին մէջ եօթանասուն տարեկանէն վեր եղողներուն անուանումն էր. և այն ծերունին որ հարիւր տարի տարեկանէն աւելի էր. իր երեսունը վեց քառասուն տարեկան որդւոյը այսպէս կ'անուանէր։

(1) Ծերունին ինքն գիտէր որ աշխարհի վրայ Աստուծոյ երկիւղն իր սրտին մէջ չունեցող չիկայ. սակայն ուզեց որ փորձով իմացնէ իր պարկեշտասուն որդւոյն ալ, որ այսպէս միշտ սովրեցուցած էր և կը սովրեցնէր։

(2) Այս ամենապարկեշտ որդիները իրենց երեւելի առաքինութեանց տէր հօր մը որդիքն ըլլալնին յայտնելու համար կարծես կը զարմանային երբ թշնամի բառը դեռ առաջին անգամ իրենց երջանիկ հօրը բերնէն կը լսէին, մինչ չէր տար երջանիկ հայրը խօսելու. որ հարցանէին ինչէր այն բառը։ Եւ ծերունին ազդուութեամբ կզգուշանար անոնց այս հարցումն ընել չտալու. որպէս զի դարձեալ չսորվին և անմեղութեամբ վարեն մարդկային ընկերական վիճակը ամենուն հետ ալ միամտութեամբ և եղբայրութեամբ կենակցելով։

Վերջին լուրեր կ'ըսէր կը հնչէն ականջիս, Մնա՛ բարեաւ իմ որդի, Մնա՛ բարեաւ իմ դուստրիկ. ուրիշ աւանդութիւն մը չունիմ, եթէ ոչ խօսք մը. չմոռանայք երբէք ողորմութին ընելը. յիշեցէք Ձեր հօրը խօսքը։

Ձեռքին մէջ գտնուած կտոր մը թուղթը հազիւ թէ երկնցուցած էր որդւոյն, և դեռ նա ձեռքէն չառած ինկաւ գետինը. վասն զի երջանիկ ծերունին նոյն կէտին էր որ ննջեց յաւիտենական հանգստեան քունը։

Երբ իմացան քոյր և եղբայր չէին գիտեր թէ ինչ պէտք ընեն. որ դիակին գլխուն կողմ քաշուած, երկուքնին իրարու փարած կ'ափսոսային իրենց հայրը . . . երկայն միջոց չանցաւ, եկան հասան դրացիներն ու բարեկամները, մխիթարեցին իբրեւ թէ երկու որբերը, և հանդիսիւ ու սիրով կատարեցին վախճանելոյն յուղարկաւորութիւնը։ Վերադարձին երբ ամէնքը դարձան իրենց տունը երկու որբերն նոյնպէս իրենց հօրմէն թափուր մնացած տունը. բնականաբար սուգը չէր լռեր, և ամէն որմոց երեսն ալ կարծես սգոյ պաստառներ էին տարածուեր։

Ուր ուրեմն ներգործեց որբոց սրտերուն մէջ աւելի բնականին քանթէ բարեկամաց մխիթարականին յորդորող ձայնը, և սկսան խորհրդով գտնել, որ բանան իրենց երջանիկ հօր գրած թուղթը. ուր նշանակուած էին որդւոյն ընելիքը հօրերնուն մահուանէն վերջը։

Առաջին. Կը պատուիրէր երբէք չը տրտմիլ իրեն մահուանը վրայ, վասն զի երջանիկ մեռաւ. ըստ որում մինչեւ իւր վերջին շունչը ողորմութիւն ընել կը փափաքէր, և կրցաւ. և ապագայ մարդկութեան յիշատակ մէկ արժանի և պարկեշտ որդի կը փափաքէր, արժանացաւ տեսնելու անոր հետ նաև նմանապէս պարկեշտ դստրիկ մը։

Երկրորդ. Կը պատուիրէր վերստին չմոռանալ ողորմութիւնը ինչպէս որ կը գործէր իրենց հայրը։

Երրորդ. Կը պատուիրէր որ իւր բոլոր արտորայքը ուրախութեամբ կը ձգէ իւր որդւոցը, որ աշխատին, վայելեն իրենց քրտինքը և ողորմին, երջանիկ ընելով և տնանկները։

Չորրորդ. Կը պատուիրէր որ սընտուկը գտնուած պատրաստի աշխատութիւնը այսինքն ոսկին ու արծաթը բաշխեն հաւասարակաց, ասոր մէկ տասնորդը կը պատուիրէր տալ Եկեղեցւոյն, չորս տասնորդն աղքատաց չորս տասնորդն ազգականացը, և մէկ տասնորդն ալ Աստուծմէ չը վախցողի մը։

Հօրը աւանդութիւնը կատարել իրենց համար մեծ երջանկութիւն սեպեցին այս երկու պարկեշտ որդիքը. սկսան սուգը մէկդի ընել, եւ ճանապարհորդաց և որբոց պզտիկ բազմութիւն մը սկսաւ դարձեալ իւր օրական պարէնը վայելել։ Որդւոց աշխատութիւնն սկսաւ, և եկեղեցւոյ, աղքատաց և ազգականաց համար որոշուած արծաթը բաշխեցին, մընայ Աստուծմէ չվախցողին տուրքը, սկսան փնտռել և չէին կրնար գտնել։

Այս և այն շատ տեղեր հարցուցին թէ ուր կրնայ Աստուծմէ չվախցող մը կենալ և չէին կրնար որոշակի պատասխան մը գտնել, միայն առաջին անգամ նենգաւորին մէկն ըսած էր , որ Աստուծմէ չվախցող միայն քահանաները կրնան ըլլալ, վասն զի անոր ամէն մարդիկներէ աւելի մերձ են . և թերեւս նորա կամքը գիտնալով չեն վախնար : Անամիտ պատանին անդարձ եւ որոշուած արծաթին մէկ տանորդն առած կ'երթայ քահանային , որուն տալով իւր հօր աւանդած պարտաւորութիւնը կատարած պիտի ըլլար. կը խօսի ինչ պատճառաւ ըլլալը , սակայն քահանայն կ'ըսէ որ մենք Աստուծմէ այնչափ կը վախնանք, որ գործերնիս անգամ Աստուծոյ փառքը սորվեցնել է , ուր կը մնայ Աստուծմէ չվախնալը , և դրամը չընդունիր , այս դրամն ուրիշի համար կտակեալ է ըսելով :

Պատանին դարձեալ ասդին անդին կը հարցունէ յԱստուծոյ աներկիւղ մէկը . և իւր քրոջը հետ միասին խորհելով մը կը գտնան , որ դահիճն ըլլայ Աստուծմէ չվախցողը . ըստ որում կըսեն եթէ նա Աստուծոյ երկիւղն ունենար , ինչո՞ւ պիտի մարդիկները կորէր մեռցնէր . Վերջապէս խորհուրդը դահճին վրայ կեցուց Աստուծոյ աներկիւղութիւնը . հետեւեալ օրը գնաց դահճին բաժինը վճարելու . և տեսաւ որ դահիճն ալ մերժեց . ըսելով որ ես ինչո՞ւ պիտի ըլլամ Աստուծմէ չվախցողը . կուսակալն ինծի կը հրամայէ , ես կը կտրեմ . ատոր մէջ ինծի յանցանք չկայ :

Այնուհետեւ տարաւ պատանին ուղղակի կուսակալին խորհելով սա ըլլայ Աստուծոյ չվախցողը . Սա ալ պատասխանեց, ոչ, մենք այդ գործին մէջ յանցաւոր չենք , յանցանքը դատաւորինն է , այնպէս կը վճռէ , մենք ալ կատարել կուտամք :

Պատանին կառնու արծաթը կը տանի դատաւորին , պատճառն իմանալուն պէս կըսէ դատաւորը, որ Աստուծմէ չվախցող չկայ մենք ալ Աստուծմէ կը վախնամք , ըստ որում չարագործն սպաննողը իւր չարիքներն են, և ոչ դատաւորին վճիռը , վասն զի Աստուած ալ որոշած է որ օրինազանցները քարկոծուին և մեռնին :

Պատանին որ կը յուսար թէ աներկիւղութիւնը դատաւորին քով պիտի գտնէր , կամ թէ սա ալ գէթ ուրիշ մը ցոյց տար , զարմացաւ երբ այսպէս լսեց . ու ըսաւ , հապա այս կտակը որո՞ւ պիտի տամ որ հօրս խօսքը կատարած ըլլամ և պարտաւոր չը մնամ :

Դատաւորն ըսաւ որ աշխարհի մէջ Աստուծմէ չվախցող չըլլար զուր տեղը մի փնտռեր , միայն եթէ կուզես այդ դրամն հոս կը գնես և ես կ'ընդունիմ, բայց սա պայմանաւ որ վարի բակը գիզուած ձիւնը (4) դուրս թափես :

Պատանին ալ իւր հօրը պատուիրանը կատարելու համար օտար և արտաքին բեռն մը յանձն առաւ : Դատաւոր մ'ալ քանի մ'արծաթ շահելու համար Աստուծմէ չը վախնալ յանձն առաւ :

---

(4) Այս քաղաքը կամ գիւղը Ձմեռուան եղանակի մէջ կը ձիւնէ շատ . և ըստ որում տուներու յարկերն հողէ էին . ամէն անգամ ձիւնելէ վերջ երբ առաւօտն անգամ արեւ ծագէր պէտք էին տանիքներէն վար պեղել . այս պատճառաւ դատաւորին տանը բակը ահագին ձիւնակարկառ մը կար որ վերցնելու էր , խորհեցաւ որ ատիկայ երբ որ ըլլայ պիտի վերնայ , և այն ալ ծախքով անշուշտ .

Քացախեան Ղազարոս աղա։
Քէմհաճեան Ոսկին էֆէնտի (2 օրի.)։
Քէրէստէճեան Ենովք աղա։
Քէչէճեան Յովհաննէս աղա Կեսարացի։
Քէօսէեան մահտեսի Կարապետ աղա։
Քըմաճեան Յարութիւն աղա։
Քուշաքչըլըեան մահտեսի Յակոբ աղա։
Քօլանճեան Յովհաննէս աղա։
Օտաղաշլի մահտեսի Պետրոս աղա։
Ֆրէնկեան Յակոբ էֆէնտի Կեսարացի. (2 օրի.)։

ՀԱՅՓԱ

Գաբրիէլեան Ստեփան աղա Ակնցի։

ՀԻՆ ՆԱԽԻՋԵՒԱՆ

Արժ. Մեսրովբ վարդապետ Սմբատեանց։

ՀՆԴԿԱՍՏԱՆ

Արժ. Ներսէս Ծ. վարդապետ.
Պ. Մալխաս Մալխասեան։

ՂԱՐԱԲԱՂ

Արժ. Արիստակէս վարդապետ Սեդրակեան։

ՄԱԼՂԱՐԱ

Սերովբէեան Յովակիմ աղա։
Պիծակեան մահտեսի Յովհաննէս աղա։

ՄԱՐԱՇ

Սուրբ Սարգիս եկեղեցւոյ վարժարան, նուէր 'ի Մ.Ե.Ծ. Յակոբեան աղայէ որ յԱղեքսանդրիա։
Ճանըքեան մահտեսի Սարգիս աղա։

ՄԱՐՁՈՒԱՆ

Գեր. Յովհաննէս Արք եպիսկոպոս Եղեսեան։

ՅՈԶԳԱՏ

Արժ. Աթանաս վարդապետ տեսուչ։
» Բարդուղիմէոս վարդապետ։
Ս. Մուրատեան Սիմէօն աղա։

ՆԻԿՈՄԻԴԻԱ

Գեր. Նիկողոս Արքեպիսկոպոս առաջնորդական փոխանորդ։
Թանգարան վերծանութեան Նիկոմիդիոյ։
Տէր Կարապետեան Մկրտիչ աղա։
Տէր Մինասեան Եղիա աղա։

ՇԱՊԻՆԳԱՐԱՀԻՍԱՐ

Գեր. Աբրահամ Արք եպիսկոպոս։

ՈՒԼՆԻԱ (ՋԷՅԹՈՒՆ)

Սուրբ Յովհաննէս եկեղեցւոյ վարժարան. Նուէր 'ի Մ.Ե.Ծ. Յակոբեան աղայէ որ յԱղեքսանդրիա։
Սուրբ Յակոբ եկեղեցւոյ վարժարան, նուէր 'ի Մ.Ե.Ծ. մահտեսի Նազարէթ աղայէ Ա. Գափամաճեան։
Սուրբ Լուսաւորիչ եկեղեցւոյ վարժարան, Նուէր 'ի Մ.Ե.Ծ. մահտեսի Նազարէթ աղայէ Ա. Գափամա։
Սուրբ Աստուածածին եկեղեցւոյ վարժարան։
Սուրբ Սարգիս եկեղեցւոյ վարժարան։

ՉԱՆԱՔ ԳԱԼԷ

Թովմաս աղա Ցախըմլեան։

ՊԱՂՏԱՏ

Խաչէնաւէրեան մահտեսի Խաչիկ աղա։
Խաչէնաւէրեան մահտեսի Խաչէնաւէր աղա։

ՊԷՐՈՒԹ

Արժ. Մեսրովբ վարդապետ տեսուչ։
Մեծ. Պօղոս աղա Վիչէնեան։

ՋՈՒՂԱՅ

Խաչատուր Տ. Մինաս Բ. քահանայ.

ՌԱՆԳՈՒՆ

Պօղոսեան Խաչիկ աղա.
Պաղտասարեան Կարապետ աղա.
Մ. Մանուկեան Սարգիս աղա.

ՍԵԲԱՍՏԻԱ

Արժ. Պետրոս վարդապետ։
Ահարոն (մահտեսի) աղա։
Աշղաճեան Մահտեսի Բաբէլ աղա։
Տ. Թէոդորոսեանց մահտեսի Մարտիրոս աղա։

ՍԵՒԵՐԵԿ

Արժ. Եփրեմ վարդապետ Եդեսացի։
Եաղուպեան Սարգիս աղա։
Ենիգօմշեան Մարգար աղա Ակնցի։
ԻՋՄԷՆԵԱՆ ՊԵՏՐՈՍ ԱՂԱ ՄԱՏԵՆՑԻ. ԳՈՐԾԱԿԱԼ ՍԻՕՆԻ։
Սամուէլ Էմինի Կիրակոս աղա։

ՍԻՆԿԱՓՈՒՐ

Պ. Բարսեղ Յովակիմեան,
Պ. Գէորգ Անդրէասեան։
Պ. Խաչիկ Մովսէսեան։

ՍՂԵՐՏ

Մահտեսի Խորանէլ աղա վարժապետ։

ՍՄՈՏԱՆԳ

Տոքթէօր Պ. Մ. Յ. Զօրաբեան։
M. D. Zerab Espr.

ՎԱՆ

Արժ. Յովհաննէս վարդապետ Շմավոնեանց։
Աւագելեանց մահտեսի Սարգիսեան Մարգար աղա։
Խաչատուրեանց մահտեսի Մկրտիչ աղա։
Նալթանեան մահտեսի Համբարձում աղա։
Պօշէօեանց Գէորգ աղա։

ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ

Գեր. Յակոբ Սրբազան Արքեպիսկոպոս։
Գույումճեանց Օհան աղա Համթեցի։
Թիւֆէնկճեան Մկրտիչ աղա Համթեցի։
Ծանակեան Աւաքէլ աղա։
ՄԵԾ. ՅԱԿՈՎԲ ԱՂԱ ՄԻՒԹԵՎԵԼԼԻ Ս. ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ԵՒ ԳՈՐԾԱԿԱԼ ՍԻՕՆԻ։
Մինասեան Յովհաննէս աղա։
Պալըզ մահտեսի Օհան աղա։
Տէր Գրիգորեան մահտեսի Կարապետ աղա։
Տէր Յակոբեան Վարդան աղա Համթեցի։

ՏՐԱՊԻԶՈՆ

Բարեհամբաւ Լ. դպրոցն։
» Մեսրովբեան դպրոցն կրթասիրականի։
» Դպրոցն Կիրակոսի։
Գասպարեան Յակոբ աղա։
Դըրդըրեան Նիկողոս աղա։
Իբրաչեան Վարդան աղա։
Կիւլպէնկեան Կարապետ աղա։
Կիւրճեան Պօղոս աղա։
Մախոխեան Արիստակէս աղա։
ՄԵՂԱՒՈՐԵԱՆ ՍԱՐԳԻՍ ԱՂԱ. ԳՈՐԾԱԿԱԼ ՍԻՕՆԻ։
Մինասեան Յօհաննէս աղա։
Յակոբեան մահտեսի Ստեփան աղա։
Ս. Մեղաւորեան Խաչիկ աղա։

ՓԱՐԻԶ

Նշանեան Գէորգ Պէյ. (5 օրի.).
Թիւրապեան Պետրոս աղա։
Յակոբեան Մարգար աղա։

ՔԻԼԻՍ

Յակոբ աղա Ակնցի. (2 օրինակ)։
Փոյլաճեան Կարապետ աղա. (2 օրինակ)։
Փամամճեան Գէորգ աղա։

ՔԻՇՆԵՒ

Արժ. Գրիգոր վարդապետ տէր Ստեփաննեան։

ՑԱՆԿ

ԱՊՐԻԼ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆՔ ԴՊՐՈՑԻ ՃԱՌԵՐ 73–79
Բանախօսութիւն 79–82
Արկածք Արիսթօնօյիւսի 83–84
Անմահութիւն հոգւոյ 84–86
Մեծապատիւ ժողով 86–89
Յիսուսի վրայ դատաստան 99–91
Անապատցի հանգուցեալ Սիմէօն վարդապետի ոտանաւոր բանք ՚ի Ս. Գրիգոր Նարեկացին . . . 91
ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆՔ 92–93
Պատմութիւն մը 93

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՔ

Ա. Սիոնը ամէն ամիս կը հրատարակուի 24 երեսէ բաղկացեալ մէկուկէս ութածալ թղթով.

Բ. Տարեկան գինն է երկու արծաթ Մէճիտիյէ. հանդերձ Ճանապարհի ծախքովը, կանխիկ վճարելի։

Գ. Զատ ուրիշ առնել ուզողը, պէտք է ամեն մէկ տետրին չորս դահեկան վճարէ։